Հայաստանի
Հանրապետություն

Empowered lives.
Resilient nations.

**«Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ՄԱԶԾ-ԿԿՀ ծրագիր**

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

# Տնային տնտեսությունների գենդերային և սոցիալական խոցելիության գնահատում

*ՀՀ մարզերի բազմաբնակարան շենքերի բնակարանների սեփականատերերի հարցման արդյունքների հիման վրա*

**Սոցիալական խոցելիության և գենդերային հարցերի խորհրդատու՝**

**Աստղիկ Միրզախանյան**

***ԵՐԵՎԱՆ** 2021*

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**Նախաբան** 3
*1.* **Հետազոտության մեթոդաբանությունը** 4
*2.* **Հետազոտված տնային տնտեսություններն ու դրանց անդամները** 7
*3.* **Հետազոտված տնային տնտեսությունների սոցիալական խոցելիությունը** 8
*4.* **Սոցիալապես խոցելի տնային տնտեսությունների գենդերային բաշխումը** 9
*5.* **Տնային տնտեսությունների ջեռուցման հետ առնչվող ցուցանիշները** 11
*6.* **Ջեռուցման հետ առնչվող աղքատության ցուցանիշների գենդերայաին և սոցիալական խոցելիության բնութագրիչները** 16
**Եզրակացություններ և առաջարկություններ** 20
**Ներդիր** *1.* **Հետազոտության հարցաթերթը** 22
**Ներդիր** *2.* **Հարցաթերթը լրացնելու ուղղեցույցը** 23
**Ներդիր** *3.* **Անալիտիկ աղյուսակներ** 26

## Նախաբան

**«Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ՄԱԶԾ-ԿԿՀ ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր)** շրջանակում 2020 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին հանրապետության հինգ մարզի ինն համայնքի բազմաբնակարան շենքերում (այսուհետ՝ ԲԲՇ) իրականացվեց տնային տնտեսությունների հետազոտություն (այսուհետ՝ Հետազոտություն):

Հետազոտության նպատակն էր՝ գնահատել ՀՀ պետական բյուջեից համայնքներին տրամադրվող սուբվենցիաների հաշվին իրականացվող «Բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում, այդ թվում՝ էներգախնայող միջոցառումների կիրառում»[1] ոլորտի ծրագրերում ընդգրկված ԲԲՇ-ների բնակիչների սոցիալական խոցելիությունը, ներառելով նաև վերջինիս գենդերային բնութագրիչներն ու առանձնահատկությունները:

Հետազոտության անհրաժեշտությունը պայմանավորված է Ծրագրի շահառուների կազմում սոցիալական խոցելի խմբերի, կանանց և երեխաների առնվազն 30 տոկոս ներկայացվածության ապահովման նախապայմանով, որի դեպքում արդարացված է Ծրագրի կողմից համայնքային սուբվենցիոն ծրագրի համաֆինանսավորումը:

Հետազոտության արդյունքները կարող են լրացնել և հարստացնել բազմաչափ աղքատության գնահատման բաղադրիչ հանդիսացող «ջեռուցման աղքատության» չափորոշիչները՝ տարանջատելով դրանք ըստ սոցիալական խոցելի խմբերի և գենդերային ցուցիչների:

Հետազոտության արդյունքների հիման վրա կատարված եզրակացություններն ու առաջարկությունները կարող են օգտագործվել նաև ՀՀ սոցիալական և գենդերային քաղաքականության թիրախային խմբերի ճշգրտման և նրանց համար նպատակային ծրագրերի մշակման համար:

---

[1] ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» որոշման (N1708-Ն, 16.11.2006) մեջ 2019-2020թթ. ընթացքում կատարված փոփոխությունների համաձայն ԲԲՇ-ներում էներգաարդյունավետության միջոցառումների իրականացումը ներառվեց սուբվենցիայի տրամադրման ոլորտների ցանկում, իսկ դոնոր կազմակերպությունների կողմից սուբվենցիոն ծրագրի 20 տոկոս և ավելի ֆինանսավորման դեպքում ՀՀ պետբյուջեից տրամադրվելիք գումարի չափաբաժնի ավելացումը 5 տոկոսի չափով լրացուցիչ խթան հանդիսացավ համայնքների և դոնոր կազմակերպությունների (այդ թվում՝ ՄԱԶԾ ծրագրերի) համագործակցության համար: [DocumentView (arlis.am)]

## *1.* Հետազոտության մեթոդաբանությունը

Հետազոտությունն իրականացվել է 2020 թվականի համայնքային սուբվենցիոն ծրագրերում (այսուհետ՝ 2020 Սուբվենցիոն ծրագիր) ներառված այն ԲԲԾ-ներում, որոնցում նախատեսվել է իրականացնել էներգախնայողոլ միջոցառումներ, ընդ որում՝ ինչպես *մասնակի* (օր.՝ տանիքի կամ վերնածածկի ջերմամեկուսացում, շքամուտքերի դռների և պատուհանների փոխարինում), այնպես էլ *ամբողջական* (շենքի պատող կոնստրուկցիաների և ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող սենքերի) ջերմամեկուսացում: ***Ըստ էության, ԲԲԾ-ների ընտրությունը կատարվել է համաֆինանսավորման համար հայտ ներկայացրած համայնքների կողմից***:[2]

Նշենք, որ հանրապետության 7 մարզերի 15 համայնքներ ներկայացրել էր ԲԲԾ-ների էներգախնայողության ոլորտում 2020թ.-ին սուբվենցիոն ծրագրեր իրականացնելու հայտեր, նախատեսելով ջերմամեկուսացման աշխատանքներ կատարել ընդամենը 125 շենքում, որից 82-ում՝ ամբողջական: Սակայն, Ծրագրի տեխնիկական և ֆինանսական աջակցությամբ ջերմամեկուսացման միջոցառումներ նախատեսվեց իրականացնել ընդհանուր առմամբ 75 շենքում[3] (***Աղյուսակ 1***):

***Աղյուսակ 1. Ծրագրի համաֆինանսավորմամբ ԲԲԾ էներգախնայողության ծրագրեր իրականացնող համայնքներ***

| *Մարզ* | *Համայնք* | *Ջերմամեկուսացման համար նախատեսված շենքերի քանակը* | | |
|---|---|---|---|---|
| | | *ընդամենը* | *ամբողջական* | *մասնակի* |

[2] ՀՀ պետական բյուջեից սուբվենցիա ստանալու համար համայնքները պետք է լրացնեն հայտ, որի ձևն ու հիմնավորման պահանջները սահմանված են ՀՀ կառավարության N1708-Ն որոշմամբ (16.11.2006): Մասնավորապես, ներկայացվող հայտում, ի թիվս մի շարք տեխնիկական պարամետրերի, պետք է հստակորեն նշվի նաև առաջարկվող «ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա»: ԲԲԾ-ների էներգախնայողության ոլորտի ծրագրերի համար հայտում պարտադիր է ներկայացնել «շահառուների վրա ծրագրի իրականացման արդյունքում... խնայողությունների ավելացման և (կամ) հարմարավետության ապահովման չափը»: DocumentView (arlis.am)

[3] Նշենք, որ որոշ տեխնիկական պատճառների հետևանքով ջերմամեկուսացման աշխատանքները Վանաձորում 2020 թ-ին չիրականացվեցին, բայց դա էական չէ սույն հաշվետվության համար, քանի որ վերջինիս նպատակը՝ ԲԲԾ-ների ընտրության գործընթացում աղքատամետության և սոցիալական խոցելի խմբերի (կանանց, երեխաների, հաշմանդամների և այլն) ներգրավվածության չափորոշիչի կիրառման ուսումնասիրությունն է:

| | | | | |
|---|---|---|---|---|
| *Սյունիք* | *Քաջարան* | 36 | 36 | 0 |
| *Լոռի* | *Վանաձոր* | 9 | 9 | 0 |
| | *Տաշիր* | 10 | 3 | 7 |
| | *Ախթալա* | 10 | 0 | 10 |
| | *Սպիտակ* | 3 | 3 | 0 |
| | *Ստեփանավան* | 3 | 3 | 0 |
| *Արագածոտն* | *Աշտարակ* | 2 | 2 | 0 |
| *Տավուշ* | *Իջևան* | 1 | 1 | 0 |
| *Արարատ* | *Վեդի* | 1 | 1 | 0 |
| | *Ընդամենը* | **75** | **58** | **17** |

Այսպիսով, ***Հետազոտությունն իրականացվել է Ծրագրի համաֆինանսավորմամբ ջերմամեկուսացման միջոցառումների համար ընտրված բոլոր 75 շենքում:***

Հետազոտությունն անցկացնելու համար նախնառաջ մշակվել են հարցաթերթը (***Ներդիր 1***) և այն լրացնելու ուղեցույցը (***Ներդիր 2***): Համաձայն ուղեցույցի, Հետազոտությանը չեն մասնակցում «փակ դռների»[4] սեփականատերերը (անհնարինության պատճառով) և այն տնային տնտեսությունները, որոնք բնակվում են վարձակալության հիմունքով (այսինքն՝ չեն հանդիսանում տվյալ բնակարանի սեփականատեր): Որոշ շենքերում առկա էին բնակարաններ, որոնք վերածվել էին բիզնես կամ հանրային նշանակության տարածքների (խանութ, վարսավիրանոց, գրասենյակ և այլն): Բնականաբար, դրանք համարվել են ոչ բնակելի տարածք և նույնպես հանվել են հետազոտվող բնակարանների ցանկից[5]: ***Աղյուսակ 2-ում*** ներկայացված է Հետազոտության վերջնական ընտրանքի չափը:

### ***Աղյուսակ 2. Հետազոտության ընտրանքի չափը***

| *Մարզ* | *Համայնք* | *ԲԲԾ-ում առկա բնակարանների քանակը*[6] | *Որից՝* | *Ընտրանքի չափը* |
|---|---|---|---|---|

---

[4] «Փակ դռների» (այսինքն՝ բնակարաններ, որտեղ տվյալ պահին ոչ ոք չի բնակվում/ապրում) երևույթը բավականին տարածված է հանրապետությունում, կապված՝ հիմնականում ընտանիքների արտագաղթի հետ: Որոշ դեպքերում սեփականատերը չի ապրում տվյալ բնակարանում, քանի որ ունի բնակվելու այլընտրանք (օր.՝ այլ բնակարան, կամ ապրում է ծնողների կամ երեխաների բնակարանում և այլն):

[5] Հարկ է նշել, որ Հետազոտության ընթացքում մերժման դեպքեր չեն արձանագրվել, իսկ հարցման պահին սեփականատիրոջ տանը չլինելու պարագայում հարցազրուցավարը պարտավոր էր կրկնակի այցելություն կատարել:

| | | | «Փակ դուռ» | Վարձա-կալված | Ոչ բնակելի | ՏՏ[7] | % |
|---|---|---|---|---|---|---|---|
| *Սյունիք* | *Քաջարան* | 1101 | 97 | 45 | 3 | 956 | 86.8 |
| *Լոռի* | *Վանաձոր* | 415 | 135 | 7 | 8 | 265 | 63.9 |
| | *Տաշիր* | 299 | 90 | 15 | 6 | 188 | 62.9 |
| | *Ախթալա* | 328 | 174 | 0 | 0 | 154 | 47.0 |
| | *Սպիտակ* | 71 | 22 | 0 | 1 | 48 | 67.6 |
| | *Ստեփանավան* | 45 | 14 | 1 | 1 | 29 | 64.4 |
| *Արագածոտն* | *Աշտարակ* | 48 | 4 | 3 | 0 | 41 | 85.4 |
| *Տավուշ* | *Իջևան* | 64 | 31 | 0 | 0 | 33 | 51.6 |
| *Արարատ* | *Վեդի* | 27 | 1 | 2 | 0 | 24 | 88.9 |
| | *Ընդամենը* | **2398** | **568** | **73** | **19** | **1738** | **72.5** |

Դաշտային աշխատանքները կազմակերպելու նպատակով ընտրվել են կանանց կողմից ղեկավարվող հասարակական կազմակերպություններ (այսուհետ՝ ՀԿ), որոնք գործունեություն են ծավալում Հետազոտությամբ ընդգրկված մարզերում և համայնքներում և ունեն տնային տնտեսություններում հարցումներ անցկացնելու որոշակի փորձ[8]: Նման մոտեցումը բխում էր Ծրագրի գենդերային ուղղվածությամբ պահանջներից, այն է՝ աջակցել կանանց և նրանց կողմից ստեղծված միություններին և կազմակերպություններին:

ՀԿ-ների կողմից լրացված 1738 հարցաթերթը ստուգվել, անհրաժեշտության դեպքում՝ լրամշակվել, մուտքագրվել է համակարգչում և Excel ծրագրային գործիքի կիրառմամբ ստեղծվել է «ԲԲԾ հետազոտություն 2020» տվյալների շտեմարան: Վերջինս դասակարգված է ըստ մարզերի և համայնքների: Հավաքագրված տվյալների հիման վրա մշակվել են վերլուծական աղյուսակներ, որոնց հիմնական փաթեթը ներկայացված է ***Ներդիր 3-ում:***

Հարկ է նշել, որ չնայած Հետազոտության ընտրանքի բավականին մեծ չափի (1738 ՏՏ), այնուամենայնիվ, այն ***չի կարող համարվել ներկայացուցչական, քանի որ ՏՏ-ներն, ըստ էության, չեն ընտրվել վիճակագրական ստույգ***

[6] Հետազոտության ընթացքում պարզվեց, որ որոշ սեփականատերեր միացրել էին նույն հարկում իրենց պատկանող երկու բնակարանները, և այդպիսի միացյալ բնակարանների թիվը 100-ից ավելի է: Դրանց բացարձակ մեծամասնությունը՝ գրեթե 90%-ը, գտնվում է Քաջարանում: Աղյուսակում միացյալ բնակարանները հաշվառված են որպես մեկ միավոր: Հետևաբար, ընտրանքի չափը որոշելու համար կիրառված բնակարանների «իրական» թիվը պակաս է շենքի անձնագրում նշվածից:

[7] Տնային տնտեսություն է համարվել մեկ բնակարանում (այդ թվում՝ միացյալ) փաստացի բնակվող սեփականատիրոջ ընտանիքը՝ անկախ այդ ընտանիքի անդամի տվյալ բնակարանում գրանցված լինելու փաստից:

[8] Քաջարանում հարցումներն իրականացրել է «Քաջարան» համատիրությունը, իսկ մնացած համայնքներում՝ «Սպիտակ Բազե», «Կանանց ռեսուրսային կենտրոն» և «Լոռե Էկո Ակումբ» համայնքահեն ՀԿ-ները: Հաշվետվությունում «ՀԿ» հասկացության մեջ պայմանականորեն ներառված է նաև «Քաջարան» համատիրությունը:

***մեթոդներով***, այլ, պարզապես, բնակվում են 2020 Սուբվենցիոն ծրագրում ներառված ԲԲԾ-ներում: Ուստի, հաշվետվությունում բերված ամփոփ և/կամ տարանջատված տվյալները և դրանց վերլուծության հիման վրա կատարված եզրահանգումները վերաբերում են միայն տվյալ Հետազոտությանը և չեն կարող ընդհանրացվել ո՛չ համայնքի, ո՛չ էլ մարզի համար:

## 2. Հետազոտված տնային տնտեսություններն ու դրանց անդամները

Հետազոտությամբ ընդգրկված 1738 ՏՏ-ներն ունեն ընդհանուր առմամբ **5797 անդամ**, որոնց բաշխումն ըստ սեռի և սոցիալական խոցելիության տեսանկյունից երկու հիմնական տարիքային խմբերի (այն է՝ մինչև 18 տարեկան երեխաներ և 63+ տարիքի մեծահասակներ) բերված է ***Աղյուսակ 3-ում***:

***Աղյուսակ 3. Հետազոտված ՏՏ-ների անդամների սեռատարիքային կազմը***

| Համայնքներ | Հետազոտված ՏՏ-ների անդամների թիվը | Որից՝ | | | Բաշխումը %-ով | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Կին (աղջիկ) | Երեխա <18 տար. | Կենսաթոշակառու >63 տար. | Կին (աղջիկ) | Երեխա <18 տար. | Կենսաթոշակառու >63 տար. |
| *Քաջարան* | 3327 | 1674 | 744 | 447 | 50.3 | 22.4 | 7.7 |
| *Վանաձոր* | 809 | 427 | 178 | 166 | 52.8 | 22.0 | 20.5 |
| *Տաշիր* | 522 | 302 | 126 | 102 | 57.9 | 24.1 | 19.5 |
| *Ախթալա* | 510 | 280 | 131 | 58 | 54.9 | 25.7 | 11.3 |
| *Սպիտակ* | 154 | 86 | 41 | 16 | 55.8 | 26.6 | 10.4 |
| *Ստեփանավան* | 103 | 56 | 22 | 28 | 54.4 | 21.4 | 13.0 |
| *Աշտարակ* | 138 | 71 | 28 | 18 | 51.4 | 20.3 | 13.0 |
| *Իջևան* | 121 | 60 | 27 | 12 | 49.6 | 22.3 | 9.9 |
| *Վեդի* | 113 | 51 | 34 | 17 | 45.1 | 30.1 | 15.0 |
| ***Ընդամենը*** | ***5797*** | ***3007*** | ***1331*** | ***864*** | ***51.9*** | ***23.0*** | ***14.9*** |

Համաձայն վերոբերյալ տվյալների, ***Ծրագրի կողմից համաֆինանսավորվող համայնքային էներգախնայողության միջոցառումների շահառուների ընդամենը թվում գերակշռում են կանայք՝ գրեթե 52%, ինչը բավարարում է ծրագրի գենդերային ուղղվածությամբ պահանջներին***: Բավականին բարձր է երեխաների և կենսաթոշակային տարիքի բնակչության տեսակարար կշիռը Ծրագրի շահառուների թվում՝ համապատասխանաբար 23% և մոտ 15%: Սա նույնպես դրական ցուցիչ է Ծրագրի միջոցառումներում նրանց բավարար ներկայացվածության առումով[9]:

[9] Համեմատության համար նշենք, որ պաշտոնական վիճակագրական տվյալների համաձայն, 2020 թվականի տարեսկզբին ՀՀ ամբողջ բնակչության կազմում մինչև 15 տարեկան երեխաները կազմել են 21.3% քաղաքներում և 21.8% գյուղերում, իսկ 63+ բնակչությունը՝ համապատասխանորեն

## 3. Հետազոտված տնային տնտեսությունների սոցիալական խոցելիությունը

ՏՏ-ների սոցիալական խոցելիության գնահատման համար ընտրվել է երեք ցուցանիշ՝ ընտանեկան նպաստ ստանալու փաստը, հաշմանդամություն ունեցող անձի առկայությունը և, որպես առանձին միավոր, դիտարկվել են միայնակ կենսաթոշակառուների ընտանիքները: Նման մոտեցման հիմքում դրված է Ծրագրի շրջանակներում 2018 թվականին իրականացված «Բնակչության սոցիալական խոցելիության գնահատման հիմնական մոտեցումները, չափորոշիչները և ցուցանիշների համակարգը» ուսումնասիրության արդյունքները[10]:

Վերոնշյալ ցուցանիշներից ելնելով հետազոտված ՏՏ-ների բաշխվածությունն ըստ Ծրագրում ընդգրկված համայնքների ներկայացված է ***Աղյուսակ 4-ում:***

***Աղյուսակ 4. ՏՏ-ների բաշխվածությունն ըստ սոցիալական խոցելիության***

| Համայնքներ | Հետազոտ-ված ՏՏ-ների թիվը | Որից՝ | | | Բաշխումը %-ով | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ստանում է ընտանեկան նպաստ | Առկա է հաշմանդամություն ունեցող անձ | Միայնակ կենսաթոշակառու | Ստանում է ընտանեկան նպաստ | Առկա է հաշմանդամություն ունեցող անձ | Միայնակ կենսաթոշակառու |
| *Քաջարան* | 956 | 24 | 68 | 55 | 2.5 | 7.1 | 5.8 |
| *Վանաձոր* | 265 | 24 | 28 | 25 | 9.1 | 10.6 | 9.4 |
| *Տաշիր* | 188 | 47 | 28 | 24 | 25.0 | 14.9 | 12.8 |
| *Ախթալա* | 154 | 19 | 29 | 12 | 12.3 | 18.8 | 7.9 |
| *Սպիտակ* | 48 | 15 | 17 | 4 | 31.2 | 35.4 | 8.3 |
| *Ստեփանավան* | 29 | 8 | 8 | 3 | 27.6 | 27.6 | 10.3 |
| *Աշտարակ* | 41 | 2 | 4 | 1 | 4.9 | 9.8 | 2.4 |
| *Իջևան* | 33 | 2 | 7 | 0 | 6.1 | 17.1 | - |
| *Վեդի* | 24 | 2 | 12 | 3 | 8.3 | 50.0 | 12.5 |
| ***Ընդամենը*** | ***1738*** | ***143*** | ***201*** | ***127*** | ***8.2*** | ***11.6*** | ***7.3*** |

Հետազոտված տնային տնտեսությունների 8.2%-ը ստանում է ընտանեկան նպաստ[11], ընդ որում նպաստառու ընտանիքների տեսակարար կշիռը բարձր է

16.1% և 12.2% - «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2020» demog_2020_2.pdf (armstat.am)

[10] http://nature-ic.am/hy/publication/Social-Vulnerability-Assessment-of-Population/10558

[11] Ընտանեկան նպաստների պետական համակարգում Ծրագրի շահառու ՏՏ-ների ընդգրկվածության ցուցանիշը լիովին համահունչ է ազգային վիճակագրական տվյալների հետ, համաձայն որոնց 2019թ. տարեվերջի դրությամբ ընտանեկան նպաստ է ստացել ավելի քան 61 հազար ընտանիք, կամ բոլոր ընտանիքների 8.2%-ը (ՀՀ-ում ընտանիքների ընդհանուր թիվը

Սպիտակի (գրեթե յուրաքանչյուր երրորդը), Ստեփանավանի և Տաշիրի համայնքներում, որոնք բոլորն էլ գտնվում են Լոռու մարզում: ՏՏ-ներից 201-ում (11.6%)[12] կան հաշմանդամություն ունեցող անձինք, այդ թվում՝ 12 ՏՏ ունի 2-3 հաշմանդամ, իսկ 8 ՏՏ՝ հաշմանդամ երեխա:

Միայնակ կենսաթոշակառուները կազմել են հետազոտված ՏՏ-ների 7.3%-ը, և դրանք կազմում են մեկ անձից բաղկացած բոլոր ՏՏ-ների մոտ 61%-ը: ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից յուրաքանչյուր տարի իրականացվող տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջական հետազոտության (ՏՏԿԱՀ) արդյունքները փաստում են, որ վերջին 10 տարիների ընթացքում (2010-2019թթ.) ավելի քան 1.5 անգամ ավելացել է մեկ անդամից բաղկացած ՏՏ-ների մասնաբաժինը ՀՀ ընտանիքների ընդհանուր թվում, կազմելով 15.7%՝ 10%-ի (2010թ.) դիմաց[13] (սույն հետազոտության տվյալներով այդպիսիք կազմել են 15.5%):

Այսպիսով, ***համայնքներում էներգախնայողության միջոցառումների սոցիալական ազդեցությունը ակներև է, քանի որ ընտրված ԲԲՇ-ներում սոցիալական խոցելի ՏՏ-ների՝ որպես շահառու խմբերի՝ ներգրավվածության ցուցանիշները բավականին բարձր են:***

## 4. Սոցիալապես խոցելի տնային տնտեսությունների գենդերային բաշխումը

Ժողովրդագրական ցուցանիշները և սոցիալապես խոցելի խմբերի մասնաբաժինը որոշակիորեն տարբերվում են կանանց և տղամարդկանց գլխավորությամբ ՏՏ-ներում (այսուհետ՝ համապատասխանաբար ԿՏՏ և ՏՏՏ): Դրա մասին են վկայում ***Աղյուսակ 5-ում և Աղյուսակ 6-ում*** ներկայացված տվյալները:

***Աղյուսակ 5. Հետազոտված ՏՏ-ների գենդերային ցուցանիշները***

| Համայնքներ | Հետազոտված ՏՏ-ներ | ԿՏՏ-ների գենդերային ցուցանիշները | ՏՏՏ-ների գենդերային ցուցանիշները |
|---|---|---|---|

հաշվարկային է, որն օգտագործվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից՝ ընտանեկան նպաստների համակարգում ընդգրկվածության մակարդակը որոշելու համար):
soc_vich_2019_13.doc (armstat.am)

[12] Նշենք, որ 2019թ. տարեվերջին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության էլեկտրոնային տեղեկատվական բազայում (հաշմանդամության վարչական ռեգիստրում) ընդգրկված է եղել 192.0 հազար հաշմանդամ, որոնք կազմել են ՀՀ մշտական բնակչության 6.5%-ը: soc_vich_2019_11.doc (armstat.am)

[13] www.armstat.am/file/article/poverty_2020_a_2..pdf

| | Կանանց գլխավո-րությամբ ՏՏ-ներ (ԿՏՏ) | Տղամարդ-կանց գլխա-վորությամբ ՏՏ-ներ (ՏՏՏ) | ԿՏՏ բաժինը %-ով | Ընդամենը ԿՏՏ անդամներ | Որից` | | Ընդամենը ՏՏՏ անդամներ | Որից` | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Կին (աղջիկ) | % | | Կին (աղջիկ)) | % |
| *Քաջարան* | 171 | 785 | **17.9** | 345 | 258 | **74.8** | 2982 | 1416 | **47.5** |
| *Վանաձոր* | 134 | 131 | **50.6** | 383 | 241 | **62.9** | 426 | 186 | **43.7** |
| *Տաշիր* | 78 | 110 | **41.5** | 141 | 112 | **79.4** | 381 | 190 | **49.9** |
| *Ախթալա* | 53 | 101 | **34.4** | 122 | 83 | **68.0** | 388 | 197 | **50.8** |
| *Սպիտակ* | 25 | 23 | **52.1** | 73 | 48 | **65.8** | 81 | 38 | **46.9** |
| *Ստեփանավան* | 10 | 19 | **34.5** | 25 | 18 | **72.0** | 78 | 38 | **48.7** |
| *Աշտարակ* | 20 | 21 | **48.8** | 62 | 38 | **61.3** | 76 | 33 | **43.4** |
| *Իջևան* | 7 | 26 | **21.2** | 20 | 12 | **60.0** | 101 | 48 | **47.5** |
| *Վեդի* | 6 | 18 | **25.0** | 27 | 12 | **44.4** | 86 | 39 | **45.3** |
| ***Ընդամենը*** | *506* | *1232* | ***29.1*** | *1198* | *822* | ***68.5*** | *4599* | *2185* | ***47.5*** |

***Հետազոտված բոլոր ՏՏ-ների 29%-ը՝ կանանց գլխավորությամբ են, ինչը շատ մոտ է Ծրագրի գենդերային պահանջներով նախանշված 30% թիրախին:*** Կանայք 1.4 անգամ ավելի բարձր ներկայացվածություն ունեն ԿՏՏ-ներում, քան ՏՏՏ-ներում, կազմելով ԿՏՏ անդամների ընդհանուր թվաքանակի 68.5%-ը: Նման տարբերությունը մեծապես պայմանավորված է միայնակ տղամարդ-կենսաթոշակառու ՏՏ-ների համեմատ միայնակ կին-կենսաթոշակառու ՏՏ-ների 3.2 անգամ գերազանցմամբ (տե՛ս ***Աղյուսակ 6***):

***Աղյուսակ 5. ԿՏՏ-ների և ՏՏՏ-ների սոցիալական խոցելիության ցուցանիշները***

| Համայնքներ | Հետազոտված ԿՏՏ-ներ | | | Հետազոտված ՏՏՏ-ներ | | | ԿՏՏ-ների տեսակարար կշիռը, % | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ստանում է ընտանեկան նպաստ | Առկա է հաշման դամության ունեցող անձ | Միայնակ կենսաթո-շակառու | Ստանում է ընտանեկան նպաստ | Առկա է հաշման դամության ունեցող անձ | Միայնակ կենսաթոշակառու | Ստանում է ընտանեկան նպաստ | Առկա է հաշման դամության ունեցող անձ | Միայնակ կենսաթոշակառու |
| *Քաջարան* | 13 | 9 | 41 | 11 | 59 | 14 | 54.2 | 13.2 | 74.5 |
| *Վանաձոր* | 12 | 16 | 19 | 12 | 12 | 6 | 50.0 | 57.1 | 76.0 |
| *Տաշիր* | 23 | 13 | 21 | 24 | 15 | 3 | 48.9 | 46.4 | 87.5 |
| *Ախթալա* | 15 | 5 | 10 | 4 | 24 | 2 | 78.9 | 17.2 | 83.3 |
| *Սպիտակ* | 8 | 6 | 3 | 7 | 11 | 1 | 53.3 | 35.3 | 75.0 |
| *Ստեփանավան* | 3 | 2 | 2 | 5 | 6 | 1 | 37.5 | 25.0 | 66.7 |
| *Աշտարակ* | 2 | 0 | 0 | 0 | 4 | 1 | 100.0 | - | - |
| *Իջևան* | 0 | 0 | 0 | 2 | 7 | 0 | - | - | - |
| *Վեդի* | 0 | 2 | 1 | 2 | 10 | 2 | - | 16.7 | 33.3 |
| ***Ընդամենը*** | ***76*** | ***53*** | ***97*** | ***67*** | ***148*** | ***30*** | ***53.1*** | ***26.4*** | ***76.4*** |

Կանանց գլխավորությամբ ՏՏ-ներն առավել ներկայացված են ընտանեկան նպաստի պետական համակարգում՝ նրանք կազմում են բոլոր նպաստառու ընտանիքների 53.1%-ը: Ընդ որում, այդպիսի ԿՏՏ-ներում կանանց (աղջիկների) մասնաբաժինը շատ բարձր է՝ գրեթե 79%, ի տարբերություն նպաստառու ՏՏՏ-ների, որոնցում կանայք (աղջիկները) կազմում են 49%: Այս տեսակետից նույնպես կարելի է փաստել, որ ***Ծրագրի կողմից համայնքներին տրամադրվող տեխնիկական աջակցությունն ու ֆինանսական օժանդակությունը համապատասխանում է աղքամետության և կանանց սատարման սկզբունքներին:***

Հետազոտված ՏՏ-ներում հաշմանդամություն ունեցող անձինք առավելապես ներկայացված են ՏՏՏ-ներում՝ բոլոր այդպիսի անդամ ունեցող ՏՏ-ների 73.6%: Ավելին, երկու և ավել հաշմանդամ ունեցող ՏՏ-ների 83%-ը՝ տղամարդկանց գլխավորությամբ են: Հարկ է նշել, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հաշմանդամության վարչական ռեգիստրում գրանցված հաշմանդամների կեսից ավելին՝ 52-53%-ը՝ տղամարդիկ են: Այսինքն՝ ***«հաշմանդամության» ցուցիչի առումով տղամարդիկ և նրանց գլխավորությամբ ընտանիքներն առավել խոցելի են***[14]:

Միայնակ կենսաթոշակառուների ՏՏ-ներն, ինչպես նշվեց, գլխավորապես ԿՏՏ-ներ են, կազմելով ընդամենի 76.4%-ը: ***Միայնակ կենսաթոշակառու ԿՏՏ-ները գրեթե երկու անգամ ավելի աղքատ են, քան միայնակ կենսաթոշակառու ՏՏՏ-ները***: Այսպես, 97 այդ տիպի ԿՏՏ-ներից 22-ը (22.7%) ստանում է ընտանեկան նպաստ, այն դեպքում, երբ 30 նույնատիպ ՏՏՏ-ից միայն 4-ն է (13.3%) նպաստառու:

## 5. Տնային տնտեսությունների ջեռուցման հետ առնչվող ցուցանիշները

Բնակարանի ջեռուցման վերաբերյալ հարցերը շատ կարևոր են ջերմամեկուսացման համայնքային ծրագրում ներգրավված ԲԲՇ-ների բնակիչների վրա այդ ծրագրերի սոցիալական ազդեցությունը գնահատելու համար: Քանի որ հետազոտման ժամանակահատվածում ջեռուցման սեզոնը դեռ չէր սկսվել, ՏՏ-ները պատասխանել են հարցաթերթի հարցերին՝ վերհիշելով նախորդ տարվա ջեռուցման սեզոնը:

---

[14] Արձանագրված երևույթի կարևոր պատճառներից է զինծառայության և պատերազմական իրադարձությունների հետ կապված տղամարդկանց հաշմանդամությունը, որը կազմում է նրանց հաշմանդամության դեպքերի մոտ 10%-ը: [soc_vich_2019_11.doc (armstat.am)]

Բնակարանի ջեռուցման հետ առնչվող ցուցանիշներն, ըստ տվյալ Հետազոտության, համարվել են *ջեռուցման միջոցը, վառելիքի տեսակը* և *ջեռուցման ռեժիմը*: Որպես ***ջեռուցման միջոց*** առանձնացվել են բնական գազով աշխատող՝ լոկալ ջեռուցման պատին ամրացված կաթսաները (այսուհետ՝ BAXI) և փակ այրման խցիկով գազի վառարանները (այսուհետ՝ TURBO)[15]: Բոլոր տիպի այլ վառարանները՝ անկախ օգտագործվող վառելիքի տեսակից (գազ, էլեկտրաէներգիա, փայտ, և այլն) արձանագրվել են որպես «վառարան»: ՏՏ-ի կողմից բնակարանը ջեռուցելու համար օգտագործված այլ միջոցների համար (օր.՝ գազօջախ, էլեկտրական տաքացուցիչ և այլն) կիրառվել է «այլ» նշումը[16]:

***Վառելիքի տեսակների*** համար կիրառվել են «գազ», «էլեկտրաէներգիա», «փայտ» և «այլ»[17] նշումները: Ինչ վերաբերում է ***ջեռուցման ռեժիմի*** ցուցանիշին, ապա այն գնահատվել է բնակչի կողմից՝ հարցազրուցավարի օգնությամբ, ելնելով հետևյալ երկու հարցի պատասխանների ընդհանրացված ընկալումից.

- *բնակարանն ամբողջությամբ եք ջեռուցում, թե՞ որոշակի սենյակները,*
- *ամբողջ օրն եք ջեռուցում, թե՞ որոշակի ժամերին:*

Կախված ջեռուցվող սենյակների թվից և ջեռուցման ժամերից ջեռուցման ռեժիմը գնահատվել է 100, 50 և 30 տոկոսներով: Ջեռուցման որևէ միջոց չունենալու և այդ պատճառով բնակարանը բոլորովին չջեռուցելու դեպքերն արձանագրվել են «0» նշումով[18]: Վերջինս հանդիպել է թվով 30 ընտանիքներում, այսինքն՝ ***հետազոտված ՏՏ-ների 1.7%-ը չունի որևէ գեռուցման միջոց և առհասարակ չի ջեռուցում բնակարանը***[19]***:***

Բնակարանների ջեռուցման հետ առնչվող ցուցանիշները՝ ըստ համայնքների, ներկայացված են ստորև բերված աղյուսակներ 6, 7 և 8-ում:

### ***Աղյուսակ 6. ՏՏ-ների բաշխումն ըստ ջեռուցման միջոցի ցուցանիշի***

---

[15] Հայաստանում բնակչության շրջանում այդ տեխնիկական տերմինները հայտնի չեն, փոխարենը լայն կիրառում ունեն «BAXI տիպի համակարգ» և «TURBO տիպի վառարան» հասկացությունները, որոնք նաև օգտագործվել են սույն հաշվետվության մեջ՝ համառոտության նպատակով:

[16] Հարցաթերթի լրացման հետ կապված մանրամասները տ՛ես սույն հաշվետվությանը կից ***Ներդիր 2***-ում:

[17] Հաշվի առնելով, որ Հետազոտությունն իրականացվել է քաղաքների ԲԲՇ-ներում, որտեղ ածուխը, աթարը և բիոզանգվածը գրեթե կիրառելի չեն բնակարանը ջեռուցելու համար, «այլ» տարբերակը հիմնականում նախատեսված էր այն դեպքերի համար, երբ օգտագործվել են թուղթը, հին շորերը, ռետինե իրերը և այլն, ինչը, համաձայն կատարված որոշ ուսումնասիրությունների, բնորոշ է շատ աղքատ ընտանիքներին:

[18] Նշենք, որ ՏՏ-ների մի մասն ուներ տեղադրված ջեռուցման միջոց, բայց ֆինանսական դժվարություններից ելնելով նախորդ տարի այն գրեթե չէր օգտագործել: Այս դեպքերը սույն հաշվետվության մեջ առանձին են դիտարկվել:

[19] Զուգահեռներ անցկացնելով երկրի աղքատության ցուցանիշների հետ, հարկ է նշել, որ ծայրահեղ աղքատության մակարդակը 2019թ.-ին կազմել է 1.4%: www.armstat.am/file/article/poverty_2020_a_2..pdf

| **Համայնքներ** | **ՏՏ-ներ, որոնք ունեն ջեռուցման միջոց և ջեռուցում են բնակարանը** | **Այդ թվում՝ որպես ջեռուցման միջոց օգտագործում են** | | | **Բաշխումը %-ով** | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | BAXI* | TURBO** | **Վառարան*** ** | BAXI* | TURBO** | **Վառարան *** ** |
| *Քաջարան* | 950 | 654 | 31 | 265 | 68.8 | 3.3 | 27.9 |
| *Վանաձոր* | 252 | 110 | 10 | 132 | 43.6 | 4.0 | 52.4 |
| *Տաշիր* | 180 | 48 | 1 | 131 | 26.7 | 0.5 | 72.8 |
| *Ախթալա* | 152 | 17 | 23 | 112 | 11.2 | 15.1 | 73.7 |
| *Սպիտակ* | 48 | 15 | 23 | 10 | 31.3 | 47.9 | 20.8 |
| *Ստեփանավան* | 28 | 11 | 0 | 17 | 39.3 | - | 60.7 |
| *Աշտարակ* | 41 | 13 | 25 | 3 | 31.7 | 61.0 | 6.3 |
| *Իջևան* | 33 | 9 | 8 | 16 | 27.3 | 24.2 | 48.5 |
| *Վեդի* | 24 | 9 | 12 | 3 | 37.5 | 50.0 | 12.5 |
| ***Ընդամենը*** | ***1708*** | ***886*** | ***133*** | ***689*** | ***51.9*** | ***7.8*** | ***40.3*** |

*** - ներառյալ բոլոր տիպի պատին ամրացված լոկալ ջեռուցման կաթսաները*

*** - ներառյալ բոլոր տեսակի փակ այրման խցիկով գազի վառարանները*

**** - ներառում է բոլոր այլ տիպի վառարանները (այդ թվում՝ «ինքնաշեն») անկախ կիրառվող վառելիքից, ինչպես նաև ջեռուցման համար օգտագործված այլ միջոցները (գազօջախ, էլեկտրական տաքացուցիչ և այլն)*

***Բնակարանը ջեռուցող ՏՏ-ների կեսից ավելին** (51.9%) **որպես ջեռուցման միջոց օգտագործում է լոկալ ջեռուցման** BAXI **տիպի համակարգ**, 7.8%-**ը՝ արդյունաբերական արտադրության** TURBO **տիպի գազի վառարան, իսկ** 40.3%-**ը՝ այլ տիպի վառարաններ կամ ջեռուցման այլ միջոցներ**.* Վերջինների տարածմամբ աչքի են ընկնում Լոռու մարզի համայնքները, հատկապես Ախթալան, Տաշիրը և Ստեփանավանը:

Նշված բնակավայրերում դաշտային աշխատանքներ իրականացրած «Լոռե Էկո Ակումբ» ՀԿ (ք. Ստեփանավան) ղեկավարի տեղեկացմամբ, այս վառարանների մեծ մասը՝ «ռեսուրսախնայող, էներգաարդյունավետ» փայտի վառարաններ են, որոնք մատակարարվել են միջազգային կազմակերպությունների կողմից՝ հումանիտար օգնության ծրագրերի շրջանակներում: Ծրագրերի հիմնական շահառուները եղել են անտառամերձ բնակավայրերի բնակիչները, որոնց համար անտառափայտը համարվել է ամենահասանելի և մատչելի ջեռուցման միջոցը (վառարանները տրամադրվել են անտառների հատումը հնարավորինս կրճատելու նպատակով): Սակայն, վերջին տարիներին անտառահատության ոլորտում կառավարության կողմից ներդրված կարգավորիչ մեխանիզմների, այդ թվում՝ խիստ պատժամիջոցների կիրառման շնորհիվ գրեթե արգելափակվեց ապօրինի անտառահատումը: Բնականաբար, անտառափայտը դարձավ այլևս ոչ այնքան մատչելի միջոց: Այս պայմաններում հնարամիտ բնակիչները «ինքնաշեն» եղանակով վերափոխեցին վառարանները որպես գազով աշխատող:

***Աղյուսակ 7. ՏՏ-ների բաշխումն ըստ ջեռուցման վառելիքի ցուցանիշի***

| Համայնքներ | ՏՏ-ներ, որոնք ջեռուցում են բնակարանը* | | Այդ թվում՝ ջեռուցման համար օգտագործում են | | | Բաշխումը %-ով | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Քանակ | % | Գազ** | Էլ.Էներգիա | Փայտ*** | Գազ* | Էլ.Էներգիա | Փայտ*** |
| *Քաջարան* | 950 | 99.4 | 684 | 231 | 35 | 72.0 | 24.3 | 3.7 |
| *Վանաձոր* | 252 | 95.1 | 146 | 103 | 3 | 57.9 | 40.9 | 1.2 |
| *Տաշիր* | 180 | 95.7 | 155 | 23 | 2 | 86.1 | 12.8 | 1.1 |
| *Ախթալա* | 152 | 98.7 | 49 | 15 | 88 | 32.2 | 9.9 | 57.9 |
| *Սպիտակ* | 48 | 100.0 | 40 | 6 | 2 | 83.3 | 12.5 | 4.2 |
| *Ստեփանավան* | 28 | 96.6 | 19 | 6 | 3 | 67.9 | 21.4 | 10.7 |
| *Աշտարակ* | 41 | 100.0 | 38 | 3 | 0 | 92.7 | 7.3 | - |
| *Իջևան* | 33 | 100.0 | 24 | 7 | 2 | 72.7 | 21.2 | 6.1 |
| *Վեդի* | 24 | 100.0 | 21 | 3 | 0 | 87.5 | 12.5 | - |
| ***Ընդամենը*** | ***1708*** | ***98.3*** | ***1176*** | ***397*** | ***135*** | ***68.9*** | ***23.2*** | ***7.9*** |

**** -*** *ներառված են միայն այն ՏՏ-ները, որոնք ունեն ջեռուցման որևէ միջոց և ջեռուցում են բնակարանը*
***** -*** *ներառյալ այն ՏՏ-ները, որոնք զուգահեռաբար օգտագործել են նաև էլեկտրավառարան (11 ՏՏ)*
****** -*** *ներառյալ այն ՏՏ-ները, որոնք օգտագործել են այլ ջեռուցման միջոցներ (գազօջախ, էլեկտրական տաքացուցիչ և այլն, ընդամենը 3 այդպիսի ՏՏ)*

Ուստի, այլ տիպի վառարաններ հիմնականում օգտագործող Ստեփանավանի և Տաշիրի ՏՏ-ների մոտ բարձր է նաև գազի՝ որպես ջեռուցման համար օգտագործվող վարելիքի, ցուցանիշը (համապատասխանաբար՝ 67.9% և 86.1%, տե՛ս ***Աղյուսակ*** *7*), իսկ Ախթալա համայնքի բնակիչների մեծ մասն առ այսօր շարունակում է դրանք օգտագործել որպես փայտի վառարան: Համաձայն աղյուսակներ 6-ում և 7-ում բերված տվյալների, Ախթալայում ամենաբարձրն են միաժամանակ և՛ վառարան, և՛ փայտ օգտագործող ՏՏ-ների տեսակարար կշիռները՝ համապատասխանաբար 73.7% և 57.9%:

Այսպիսով, հետազոտված ՏՏ-ների բացարձակ մեծամասնությունը (98.3%) ունի ջեռուցման միջոց և սովորաբար ջեռուցում է իր բնակարանը: ***Բնակարանը ջեռուցող բոլոր ՏՏ-ների 68.9%-ը ջեռուցման համար օգտագործում է գազ, 23.2%-ը՝ էլեկտրաէներգիա և 7.9%-ը՝ փայտ:***

Այնուամենայնիվ, անկախ այն հանգամանքից, թե ինչ վառելիք են օգտագործում ՏՏ-ները, բնակարանի ջեռուցման խնդիրը բավականին ծանր ֆինանսական բեռ է ցանկացած ՏՏ-ի համար: ՏՏ-ների մի մասն այդ ֆինանսական բեռը թեթևացնելու որոշակի միջոց է դիտարկում բնակարանը ոչ լիարժեք (այսինքն՝ մինչև 50%) կամ հազվադեպ ջեռուցելու (այսինքն՝ մինչև 30%) վարքագիծը (***Աղյուսակ 8***):

***Աղյուսակ 8. ՏՏ-ների բաշխումն ըստ ջեռուցման ռեժիմի ցուցանիշի***

| **Համայնքներ** | **ՏՏ-ներ, որոնք ջեռուցում են բնակարանը** | **ՏՏ-ների քանակը, որոնք ջեռուցում են բնակարանը`** | | | **Բաշխումը %-ով** | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 100% | 50% | 30% | 100% | 50% | 30% |
| *Քաջարան* | 950 | 185 | 539 | 226 | 19.5 | 56.7 | 23.8 |
| ***Վանաձոր*** | **237** | **63** | **127** | **47** | **26.6** | **53.6** | **19.8** |
| *Տաշիր* | 180 | 123 | 43 | 14 | 68.3 | 23.9 | 7.8 |
| *Ախթալա* | 152 | 18 | 112 | 22 | 11.8 | 73.7 | 14.5 |
| *Սպիտակ* | 48 | 23 | 24 | 1 | 47.9 | 50.0 | 2.1 |
| *Ստեփանավան* | 28 | 14 | 7 | 7 | 50.0 | 25.0 | 25.0 |
| *Աշտարակ* | 41 | 7 | 27 | 7 | 17.1 | 65.8 | 17.1 |
| *Իջևան* | 33 | 4 | 26 | 3 | 12.1 | 78.8 | 9.1 |
| *Վեդի* | 24 | 18 | 4 | 2 | 75.0 | 16.7 | 8.3 |
| ***Ընդամենը*** | *1693* | *455* | *909* | *329* | *26.9* | *53.7* | *19.4* |

Ինչպես վկայում են վերոբերյալ աղյուսակի տվյալները, ***ՏՏ-ների բացարձակ մեծամասնությունը` գրեթե 2/3-րդը չի կարողանում լիարժեք ջեռուցել բնակարանը:*** Ավելին, յուրաքանչյուր հինգերորդ ՏՏ ջերուցում է բնակարանը 30%-ի չափով, այսինքն` կամ օրական մի քանի ժամ, կամ մեկ սենյակը, որտեղ ընտանիքի անդամները սովորաբար հավաքվում են: ՏՏ-ների մի մասը նշել է, որ որոշ դեպքերում պարտադրված է ջերմություն ապահովել փոքր երեխայի և/կամ հաշմանդամ / անկողնային հիվանդ անդամի ննջասենյակում, բայց ոչ մշտապես և լիարժեքորեն:

Ջեռուցման վարքագծի տեսանկյունից հետաքրքրական են Վանաձորում ՏՏ-ների հարցումների ընթացքում բացահայտված դեպքերը: Աղյուսակ 8-ում Վանաձորի տվյալները գունանջատված են, քանի որ բնակարանը ջեռուցող ՏՏ-ների քանակը (237) տարբերվում է աղյուսակներ 6-ում և 7-ում բերված տվյալներից (252): Բանն այն է, որ «Սպիտակ Բազե» ՀԿ (ք. Սպիտակ) հարցազրուցավարի պարզաբանմամբ, Վանաձորում հետազոտված ՏՏ-ներից 15-ն ունեին ջեռուցման միջոց, անգամ ժամանակակից BAXI տիպի լոկալ համակարգ, սակայն որոշակի ֆինանսական դժվարությունների պատճառով նախորդ սեզոնին բոլորովին կամ գրեթե չէին ջեռուցել բնակարանը: Ելնելով հարցաթերթը լրացնելու ուղեցույցի պահանջներից, նման դեպքերը նույնպես արձանագրվել են «0» նշումով: Միևնույն ժամանակ, այդպիսի ՏՏ-ները ունեն բնակարանը ջեռուցելու ձևավորված վարքագիծ, այսինքն` գնել, տեղադրել և օգտագործել են գեռուցման համակարգեր կամ ժամանակակից վառարաններ: Ուստի, նշված ՏՏ-ները սույն հաշվետվության հաջորդ մասերում ներառված են «ջեռուցում ունեցող» ՏՏ-ների կազմում:

## 6. Ջեռուցման հետ առնչվող աղքատության ցուցանիշների գենդերային և սոցիալական խոցելիության բնութագրիչները

ՀՀ Վիճակագրական կոմիտեի և Համաշխարհային բանկի համատեղ ջանքերով 2016թ.-ին Հայաստանում ներդրվեց ***բազմաչափ աղքատության ազգային գնահատման*** համակարգը: Ըստ սահմանման, աղքատությունն ինքնին բազմաչափ երևույթ է և դրամային աղքատության ցուցանիշով լիարժեքորեն չի գնահատվում: Ուստի մասնագետները մշակել են որակական գնահատումների մի համակարգ, որի միջոցով ուսումնասիրվում են ՏՏ-ների այսպես կոչված «զրկանքները»: Վերջինս բնութագրվում է որպես *մարդկային զարգացման տարբեր ոլորտներում կարողությունների բացեր, որոնք ժամանակի ընթացքում հաճախ տևական բնույթ են կրում, ուստի կարող են բացասաբար անդրադառնալ տնային տնտեսության՝ ապագայում աղքատությունից և խոցելիությունից խուսափելու ունակության վրա:* Ըստ այդմ, բազմաչափ աղքատությունը բնութագրող զրկանքների ուսումնասիրությունը լրացնում է դրամային աղքատության վերլուծությունը ոչ դրամային տեսքով արտահայտված տեղեկատվությամբ[20]:

Հայաստանում զրկանքների շարքին է դասվել նաև բնակարանի ջեռուցումն ապահովելու տնային տնտեսության անկարողությունը, համարելով, որ ջեռուցումը կարևոր ցուցիչ է ոչ միայն կենսամակարդակի, այլև մարդու ինքնագնահատականի տեսանկյունից: Միևնույն ժամանակ, ներդրվել է «առողջ ջեռուցման» հնարավորությունից զրկված լինելու ցուցանիշը, որը ներառում է այն դեպքերը, երբ բացակայում է կենտրոնացված ջեռուցումը, կամ էլեկտրականության, բնական գազի կամ հեղուկ գազի միջոցով բնակարանը ջեռուցելու ՏՏ հնարավորությունը: Հետևաբար, բոլոր այն ՏՏ-ները, որոնք ջեռուցման համար օգտագործում են փայտ, ածուխ, աթար և այլ վառելամիջոցներ համարվում են աղքատ:

***Այսպիսով, բնակարանը ջեռուցելու և «առողջ ջեռուցում» ապահովելու հնարավորություններից զրկված լինելու ցուցանիշները՝ Հայաստանում բազմաչափ աղքատության կարևոր չափումներից են:*** Եթե դրանց էլ գումարել ոչ լիարժեք ջեռուցման առումով ամենացածր՝ 30% ջեռուցում ապահովելու ցուցանիշը, ապա կարելի է որոշակի պատկեր ստանալ հետազոտված ՏՏ-ների աղքատության /սոցիալական խոցելիության մակարդակի մասին:

Սույն հաշվետվության նախորդ բաժնում ներկայացվեց, որ հետազոտված ՏՏ-ների ՝

---

[20] «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2020», բաժին 2.7: www.armstat.am/file/article/poverty_2020_a_2..pdf

- *1.7% չունի որևէ ջեռուցման միջոց և առհասարակ չի ջեռուցում բնակարանը,*
- *7.9%-ը ջեռուցում է բնակարանը փայտով,*
- *73.1%-ը չի կարողանում ապահովել լիարժեք ջեռուցում, այդ թվում 19.4% ջեռուցում է բնակարանը 30%-ով:*

Ջեռուցման հետ առնչվող աղքատության ցուցանիշների առումով կարելի է արձանագրել, որ Հետազոտությամբ ընդգրկված ԲԲԾ-ների բնակիչների սոցիալական խոցելիության մակարդակը բավականին բարձր է[21]:

Հետազոտված ՏՏ-ների ջեռուցման հետ առնչվող աղքատության ցուցանիշները խիստ տարբերվում են ըստ կանանց և տղամարդկանց գլխավորությամբ ՏՏ-ների, ինչպես նաև ըստ սոցիալապես խոցելի ՏՏ-ների, ինչի մասին են վկայում ***Աղյուսակ 9-ում*** և ***Աղյուսակ 10-ում*** բերված տվյալները:

***Աղյուսակ** 9. **Սոցիալապես խոցելի ԿՏՏ-ների և ՏՏՏ-ների բաշխումն ըստ «ջեռուցման աղքատության» ցուցանիշի***

| **«Ջեռուցման աղքատության» ցուցանիշները** | **ԿՏՏ** | **Որից`** | | | **ՏՏՏ** | **Որից`** | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | **Ստանում է ընտանեկան նպաստ** | **Առկա է հաշմանդամություն ունեցող անձ** | **Միայնակ կենսաթոշակառու** | | **Ստանում է ընտանեկան նպաստ** | **Առկա է հաշմանդամություն ունեցող անձ** | **Միա կեն -շա** |
| Ընդամենը ՏՏ թիվը տվյալ խմբում | 504 | 76 | 53 | 96 | 1234 | 67 | 148 | |
| Այդ թվում` | | | | | | | | |
| ՏՏ-ներ, որոնք չեն ջեռուցում բնակարանը | 14 | 1 | 1 | 4 | 16 | 1 | 2 | |
| ***% (տվյալ խմբում)*** | ***2.8*** | ***1.3*** | ***1.9*** | ***4.2*** | ***1.3*** | ***1.5*** | ***1.4*** | |
| ՏՏ-ներ, որոնք ջեռուցում են փայտով | 41 | 11 | 4 | 6 | 94 | 8 | 22 | |
| ***% (տվյալ խմբում)*** | ***8.1*** | ***14.5*** | ***7.5*** | ***4.2*** | ***7.6*** | ***11.9*** | ***14.9*** | |
| **Ընդամենը ջեռուցման** | 55 | 12 | 5 | 10 | 110 | 9 | 24 | |

[21] Համեմատության համար նշենք, որ բազմաչափ աղքատության մակարդակը ՀՀ-ում կազմել է 22%, որը ներառում է, բացի ջեռուցման ցուցանիշից, ՏՏ կենսամակարդակը բնութագրող 5 ոլորտների և 25 ցուցանիշ:

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **ցուցանիշով աղքատ ՏՏ-ներ** | | | | | | | | |
| ***% (տվյալ խմբում)*** | ***10.9*** | ***15.8*** | ***9.4*** | ***10.4*** | ***8.9*** | ***13.4*** | ***16.2*** | |

***Աղյուսակ** 10. **Սոցիալապես խոցելի ԿՏՏ-ների և ՏՏՏ-ների բաշխումն ըստ ջեռուցման ռեժիմի ցուցանիշի***

| **Սոցիալապես խոցելի ՏՏ-ներ** | **ԿՏՏ-ներ, որոնք ջեռուցում են բնակարանը** | **Որից՝ գեռուցել են** | | | **ՏՏՏ-ներ, որոնք ջեռուցում են բնակարանը** | **Որից՝ գեռուցել են** | | | **Գենդերային գործակիցը (ԳԳ) յուրաքանչյուր խմբի համար** | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 100% | 50% | 30% | | 100% | 50% | 30% | 100% | 50% | 30% |
| Ընդամենը ՏՏ թիվը տվյալ խմբում | 490 | 98 | 263 | 129 | 1218 | 357 | 646 | 215 | **0.68** | **1.01** | **1.49** |
| *%* | ***100.0*** | ***20.0*** | ***53.7*** | ***26.3*** | ***100.0*** | ***29.3*** | ***53.0*** | ***17.7*** | | | |
| Այդ թվում՝ | | | | | | | | | | | |
| Ստանում է ընտանեկան նպաստ | 75 | 19 | 34 | 22 | 66 | 34 | 25 | 7 | **0.49** | **1.20** | **2.76** |
| *%* | ***100.0*** | ***25.3*** | ***45.3*** | ***29.3*** | ***100.0*** | ***51.5*** | ***37.9*** | ***10.6*** | | | |
| Առկա է հաշմանդամություն ունեցող անձ | 52 | 15 | 23 | 14 | 146 | 47 | 78 | 21 | **0.89** | **0.83** | **1.88** |
| *%* | ***100.0*** | ***28.8*** | ***44.2*** | ***27.0*** | ***100.0*** | ***32.2*** | ***53.4*** | ***14.4*** | | | |
| Միայնակ կենսաթոշակառու | 92 | 13 | 39 | 40 | 26 | 4 | 6 | 16 | **0.92** | **1.84** | **0.71** |
| *%* | ***100.0*** | ***14.1*** | ***42.4*** | ***43.5*** | ***100.0*** | ***15.4*** | ***23.1*** | ***61.5*** | | | |

Ջեռուցման աղքատության տեսակետից ԿՏՏ-ներն՝ ընդհանուր առմամբ, 1.2 անգամ ավելի խոցելի են, քան ՏՏՏ-ները (Աղյուսակ 9): Միաժամանակ, ***եթե ԿՏՏ-ների խմբում առավել խոցելի են նպաստառու ընտանիքները** (15.8%), **ապա ՏՏՏ-ների խմբում շատ ավելի խոցելի են միայնակ տղամարդ-կենսաթոշակառուները** (25.8%):*

Բոլոր ԿՏՏ-ների միայն 20%-ն է լիարժեք ջեռուցում բնակարանը, այն դեպքում երբ ՏՏՏ-ների նույն ցուցանիշը կազմում է 29.3%: Ինչ վերաբերում է 30%-ով ջեռուցում ապահովող ՏՏ-ներին, ապա այս ցուցանիշով ԿՏՏ-ները գրեթե 1.5 անգամ ավելի խոցելի են, քան ՏՏՏ-ները:

Ջեռուցման ռեժիմի հետ կապված գենդերային անհավասարության գործակիցները (այսուհետ՝ ԳԳ), որոնք նշված են փակագծերում, բավականին բարձր են սոցիալապես խոցելի հետևյալ խմբերում.

- ընտանեկան նպաստ ստացող ԿՏՏ-ների հնարավորությունները լիարժեք (100%) ջեռուցում ապահովելու առումով գրեթե 2 անգամ զիջում են ՏՏՏ-ներին (0.49),

- ջեռուցման աղքատության հետ առնչվող 30% ջեռուցման ռեժիմի ցուցանիշի գծով հաշվարկված ԳԳ-ն վկայում է նպաստառու ԿՏՏ-ների՝ ՏՏՏ-ների համեմատ, գրեթե 3 անգամ ավելի խոցելի լինելու մասին (2.76),
- ի տարբերություն ՏՏՏ-ների, հաշմանդամ ունեցող ԿՏՏ-ների ավելի մեծ մասնաբաժինն է ջեռուցում բնակարանը 30%-ով (1.88),
- միայնակ կին-կենսաթոշակառուների համեմատ ավելի խոցելի են միայնակ տղամարդ-կենսաթոշակառուները (0.71)[22], քանի որ նրանց գերակշիռ մասը՝ 61.5%-ը չի կարողանում ապահովել 30%-ից բարձր ջեռուցման ռեժիմ:

Այսպիսով, ջեռուցման ռեժիմի ցուցանիշի գծով կատարված վերլուծությունը նույնպես վկայում է ԿՏՏ-ների, ընհանուր առմամբ, ՏՏՏ-ներից ավելի խոցելի լինելու մասին, առանձնացնելով, սակայն, ***նպաստառու և/կամ հաշմանդամություն ունեցող անդամ ունեցող, ինչպես նաև միայնակ կենսաթոշակառուների ԿՏՏ-ները որպես ամենախոցելի***:

## Եզրակացություններ և առաջարկություններ

Հետազոտության տվյալների վերլուծությունը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրակացությունները և առաջարկությունները.

1. Համայնքների կողմից պետական սուբվենցիոն ծրագրերին մասնակցելու համար ներկայացված հայտերի ընտրության գործիքակազմն, իրապես, հիմնված է աղքատամետության և խոցելի խմբերի ներառականության չափորոշիչների վրա: Դրա մասին են վկայում Հետազոտության տվյալների սոցիալական խոցելիության և գենդերային վերլուծությունը: Ուստի, կարելի է եզրակացնել, որ բոլոր հետազոտված համայնքներում, որտեղ Ծրագրի համաֆինանսավորմամբ նախատեսված է իրականացնել ԲԲԾ-ների էներգա-խնայողության միջոցառումներ, շահառուների սոցիալական խոցելիության և գենդերային ցուցանիշների մակարդակը չի զիջում, իսկ որոշ համայնքներում նաև գերազանցում է հանրապետության միջին ցուցանիշներին:

[22] Տարբեր գիտական գնահատականների համաձայն բազմանդամ ընտանիքներում գործում է «մասշտաբից տնտեսման» էֆեկտը, որն արտահայտվում է մեկ շնչի հաշվով կատարվող ծախսերի համարժեքության գործակցով: Այսպես, ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից իրականացվող Տնային Տնտեսությունների Կենսամակարդակի Ամբողջացված Հետազոտության (ՏՏԿԱՀ) մեթոդաբանությունը կիրառում է ՏՏ անդամների համարժեքության երկու գործակից՝ չափահաս անձի համար – 0.87 և մինչև 14 տարեկան երեխայի համար – 0.65: Բնականաբար, մեկ անձից բաղկացած ՏՏ-ի համար այդ գործակիցը հավասար է 1-ի: «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», 2019 [poverty_2019_a_1.pdf (armstat.am)]

***Եզրակացություն.*** Ծրագրի ներգրավվումը պետական սուբվենցիոն ծրագրերում ընդգրկված համայնքներում (էներգախնայողության միջոցառումների համա-ֆինանսավորում, տեխնիկական աջակցություն, իրազեկման աշխատանքների օժանդակում և այլն) կանխորեն արդարացված է՝ Ծրագրի սոցիալական և գենդերային ուղղվածությամբ պահանջներին այդ համայնքների բնակչության սոցիալական կարգավիճակի համապատասխանության տեսակետից:

***Առաջարկություն.*** Ծրագիրը պետք է շարունակի էներգախնայողության միջոցառումների գծով պետական սուբվենցիոն ծրագրերում ընդգրկված համայնքների հետ համագործակցումը, այդ թվում՝ համաֆինանսավորումը:

2. Հետազոտությամբ վերհանված սոցիալապես առավել խոցելի տնային տնտեսությունների համար դժվար է լինելու մասնակցել ջերմամեկուսացված / վերանորոգված ԲԲԾ-ների պահպանման ֆինանսավորմանը: Հատկապես, այն ՏՏ-ները, որոնք չունեն որևէ ջեռուցման միջոց և/կամ չեն ջեռուցում իրենց բնակարանը, չեն կարողանալու «գնահատել» ջեռուցման ծախսերի խնայողությունը և, ըստ այդմ, իրենց մասնակցության նպատակա-հարմարությունը:

***Եզրակացություն.*** Սոցիալապես առավել խոցելի և աղքատ տնային տնտեսությունների (միայնակ կենսաթոշակառուների, նպաստառու, հաշմանդամ ունեցող ընտանիքների և այլն) ֆինանսական մասնակցությունը Ծրագրի արդյունքների հարատևության ապահովման հարցում քիչ հավանական է:

***Առաջարկություն.*** Ծրագիրը պետք է համայնքի ղեկավարությանն աջակցի մշակել և կիրառել առանձնահատուկ մեխանիզմներ՝ աղքատ և սոցիալապես առավել խոցելի տնային տնտեսություններին ԲԲԾ-ների հետագա պահպանման հարցում ներգրավվելու համար:

3. Կլիմայի փոփոխության հետ կապված՝ միջին ջերմաստիճանի բարձրացման հետևանքով, ՏՏ-ների ջեռուցման ծախսերը կարող են օբյեկտիվորեն նվազել (կրճատվում է ջեռուցման սեզոնի տևողությունը, պակասում է սաստիկ ցուրտ օրերի քանակը և այլն): Այս պարագայում, համայնքների հետաքրքրությունը սուբվենցիոն ծրագրերի հայտերում ԲԲԾ-ների ջերմամեկուսացման միջոցառումներ ներառելու ուղղությամբ կարող է պակասել: Ավելին, կդժվարանա նաև շահառուների մոբիլիզացումն արդեն իսկ ջերմամեկուսացված ԲԲԾ-ների պահպանման համար ֆինանսական միջոցներ հատկացնելու հարցում, քանի որ «տեսանելի» չի լինելու ջեռուցման համար տնտեսված գումարների կապը ջերմամեկուսացման հետ:

***Եզրակացություն.*** Ծրագրի համաֆինանսավորմամբ ջերմամեկուսացված ԲԲԾ-ներում բնակվող շահառու ՏՏ-ների էներգախնայողության ցուցանիշները կարող է չհամապատասխանեն էներգախնայողության սպասվելիք մակարդակին:

***Առաջարկություն.*** Ծրագրի արդյունքների մշտադիտարկման համար պետք է մշակվեն «հարակից» ցուցանիշներ, որոնց միջոցով ջերմամեկուսացման արդյունավետությունը ՏՏ-ների համար կգնահատվի ոչ միայն ջեռուցման սեզոնին խնայելու, այլև ամառվա տապից/շոգից պաշտպանվելու տեսանկյունից:

## Ներդիր *1.* Հետազոտության հարցաթերթը

**Հ Ա Ր Ց Ա Թ Ե Ր Թ**

**Համայնքի սուբվենցիոն ծրագրում ընդգրկված բազմաբնակարան շենքի բնակիչների (տնային տնտեսությունների) սոցիալական կարգավիճակի մասին**

Հասցե_____________________________________________

| Լրացնել բնակարանի համարին համապատասխան տողում | Փաստացի բնակվողների թիվը, **մարդ** | Ստանում է ընտանեկան կամ սոցիալական նպաստ<br><br>Այո **«+»**,<br>Ոչ **«-»** | Ընտանիքի գլխավոր<br><br>Կին **«Կ»**<br><br>Տղամարդ **«Տ»** | Ընտանիքի անդամների սոցիալական բնութագրիչները | | | | Բնակարանի ջեռուցման հատկանիշները | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Կանանց /աղջիկների/ թիվը **մարդ** | Մինչև 18տ. երեխաների թիվը, **մարդ** | Հաշմանդամների թիվը և կարգը, **մարդ**<br><br>Նշել՝<br>«Հ1», «Հ2», «Հ3» կամ «ՀԵ» -հաշմանդ/ երեխա | Տարիքային կենսաթոշակառուների թիվը, **մարդ** | Օգտագործվող վառելիքը<br><br>Գազ «Գ»<br>Էլեկտր. «Էլ»<br>Փայտ «Փ»<br>Ոչինչ «0» | Ջեռուցման սարքը<br><br>BAXI<br>TURBO<br>Վառարան «Վ»<br>Այլ - «Այլ» | Ջեռուցման ռեժիմը<br><br>100%<br>50%<br>30%<br>0% |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 1. | | | | | | | | | | |
| 2. | | | | | | | | | | |
| 3. | | | | | | | | | | |
| 4. | | | | | | | | | | |
| 5. | | | | | | | | | | |
| 6. | | | | | | | | | | |
| 7. | | | | | | | | | | |
| 8. | | | | | | | | | | |
| 9. | | | | | | | | | | |
| 10. | | | | | | | | | | |
| 11. | | | | | | | | | | |
| 12. | | | | | | | | | | |
| 13. | | | | | | | | | | |
| 14. | | | | | | | | | | |
| 15. | | | | | | | | | | |
| 16. | | | | | | | | | | |
| .... | | | | | | | | | | |

## Ներդիր 2. Հարցաթերթը լրացնելու ուղղեցույցը

**ՈՒ Ղ Ե Ց ՈՒ Յ Ց**

*Հարցաթերը լրացնելու համար*

Հարցաթերթը լրացնողներին, խնդրում եմ, նախապես ուսումնասիրել սույն Ուղեցույցը:

Ուղեցույցը կազմված է համաձայն հարցաթերթի հարցերի համարների:

1. Հարցաթերթը լրացվում է ըստ բնակարանի համարի: Եթե տվյալ բնակարանում՝
   ա. ոչ ոք չի ապրում,
   բ. ապրում է վարձակալող ընտանիք,
   գ. ձնափոխված է բիզնես-տարածքի,
   դ. բնակիչը հրաժարվում է պատասխանել հարցաթերթին, ապա

համապատասխան բնակարանի համարը վերձնել օղակի մեջ և դիմացը գրել.
   ա. «փակ դուռ»,
   բ. «վարձակալված»,
   գ. «ոչ բնակելի»,
   դ. «հրաժարվել է» բառերը:

***Եթե բնակիչը հարցման պահին տանը չէ, ապա կրկնակի անգամ այցելել /կամ հեռախոսով կապնվել և պայմանավորվել այցելության մասին/, որպեսզի լրացնել համապատասխան բնակարանի տվյալները:***

2. Բնակարանում փաստացի բնակվողների թիվը լրացվում է, բնակչին ուղղակի հարցնելով՝ «Քանի՞ անձ է մշտապես այստեղ բնակվում»:

***Եթե որևէ մեկը գրանցված է, բայց հիմնականում չի ապրում այդ բնակարանում, ապա չի հաշվառվում, իսկ եթե գրանցված չէ, բայց այդտեղ է ապրում, ապա հաշվառվում է:***

3. Նպաստների վերաբերյալ հարցը վերաբերում է միայն ընտանեկան նպաստներին: ***Ընտանեկան նպաստը*** նշանակվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ անապահովության որոշակի միավոր ունեցող ընտանիքներին:

***Եթե բնակիչը հայտնում է, որ հաշվառված է նպաստների համակարգում, բայց նպաստ չի ստանում, որովհետև միավորները չեն բավարարում, ապա նույնպես նշել «+»:***

4. Ընտանիքի գլխավորի վերաբերյալ պետք է ուղղակի հարցնել բնակչին: Շատ հաճախ ընտանիքի տիկինը (կամ ամուսինը) որպես գլխավոր նշում է սկեսուրին (կամ մորը), ուրեմն, պետք է նշել «Կ»:

***Եթե ընտանիքի գլխավորը տղամարդն է, որն արտագնա աշխատանքների է, ապա նույնպես նշվում է «Կ»:***

5. Ընտանիքում բնակվող կանանց թվում ներառվում են նաև աղջիկ-երեխաները, ինչպես նաև տատիկները, քույրերը և այլ իգական սեռի բարեկամները, եթե բնակվում են այդ բնակարանում:
6. Եթե ընտանիքն ունի մի քանի երեխա, ***ապա այս սյունյակում գրանցել միայն մինչև 18 տարեկան երեխաների թիվը:***
7. Եթե ընտանիքում կա ավելի քան մեկ հաշմանդամ, ապա նշել յուքանչյուրին՝ իր համապատասխան կարգով, օր.՝ «Հ2» + «Հե», կամ «Հ3» + «Հ3» և այլն:
8. Այս սյունյակում նշել միայն կենսաթոշակառուներին, այսինքն՝ նրանց ովքեր ստանում են աշխատանքային (63+ տարեկան), կամ սոցիալական (65+ տարեկան) թոշակներ: Հաշմանդամության կամ կերակրողին կորցրածի համար թոշակ ստացողները այստեղ չեն հաշվառվում:

***Այս սյունյակում լրացված տվյալներն, ըստ էության, ցույց են տալու բնակիչների տարիքային կազմը, այսինքն՝ 63+ տարեկան բնակիչների թվաքանակը:***

9. Բնակարանի ջեռուցման վերաբերյալ հարցերը շատ կարևոր են ջերմամեկուսացման համայնքային ծրագրում ներգրավված շենքերի բնակիչների վրա այդ ծրագրերի սոցիալական ազդեցությունը գնահատելու համար: Քանի որ այս տարի ջեռուցման սեզոնը դեռ չի սկսվել, ուրեմն հարցը տրվում է անցյալ տարվա վերաբերյալ:

***Եթե բնակիչն ասում է, որ անցյալ տարի նա չի ջեռուցել իր բնակարանը, ապա նշվում է «0»: Եթե բնակիչն ասում է, որ օգտագործել է վառելիքի մի քանի տեսակ, ապա գրանցվում է այն վառելիքի տեսակը, որը նա համարում է հիմնականը՝ իր բնակարանը նախորդ տարի ջեռուցելու համար, իսկ լրացուցիչ վառելիքը նշվում է փակագծերում:***

10. Այս հարցում օգտագործվել են խմբավորված նշաններ: Բնականաբար, BAXI համակարգը ժողովրդական օգտագործման տերմին է, ուստի դա կարող է լինել ցանկացած այլ անվանմամբ պատին տեղադրված կաթսայով (Squirrel, Fondital, EuroTerm կամ ուրիշ) լոկալ ջեռուցման համակարգ: Նույնը վերաբերում է փակ այրման խցիկով TURBO գազի վառարաններին, որոնք նույնպես կարող են լինել տարբեր մակնիշի:

***Ցանկացած պատին տեղադրված կաթսայով լոկալ ջեռուցման համակարգ գրանցվում է BAXI նշումով; ցանկացած փակ այրման խցիկով գազի վառարան՝ TURBO նշումով, իսկ «Վ» նշումով գրանցվում են էլեկտրական և փայտի վառարանները, կամ այլ տեսակի (նաև գազով աշխատող) «ինքնաշեն» վառարանները: Եթե բնակարանը ջեռուցվում է օդորակիչով (ինչը հազվադեպ է լինելու), նույնպես նշել «Վ»: «Այլ» նշումը կիրառել, եթե բնակիչը ջեռուցում է բնակարանը գազօջախով, էլեկտրաօջախով կամ վերը թվարկված միջոցներից տարբերվող այլ միջոցներով:***

11. Ջեռուցման ռեժիմի տոկոսը գրանցելու համար բնակչին երկու հարց է տրվում.
ա. բնակարանն ամբողջությամբ եք ջեռուցում, թե՞ որոշակի սենյակները,
բ. ամբողջ օրն եք ջեռուցում, թե՞ որոշակի ժամերին:

***Եթե բնակիչը հայտնում է, որ հիմնականում ամբողջությամբ է ջեռուցում բնակարանը և գրեթե ամբողջ օրվա ընթացքում, ապա նշել** «100%»: **Մնացած երկու դեպքում օգնեք բնակչին գնահատել, քանի տոկոսով է ջեռուցում իր բնակարանը`** 50 **թե՞** 30: **Եթե մի քանի ժամով միացնում է համակարգը բնակարանի ամբողջ մակերեսի համար, ապա համարեք դա** 50%, **եթե մի քանի ժամով ջեռուցում է մեկ սենյակը, ապա`** 30%, **եթե մշտապես ջեռուցում է մեկ-երկու սենյակը`** 50%:*

Հարցաթերթի նմուշը պետք է լրացնել այնքան տողերով, որքան տվյալ հասցեի շենքում բնակարան կա: Յուրաքանչյուր հասցեի համար օգտագործել առանձին հարցաթերթ, որում տողերի քանակը նախապես համապատասխանեցնել տվյալ շենքի բնակարանների թվին: ***Հարցաթերթը լրացնել ձեռքով`*** բնակչի պատասխանների հիման վրա: Հարցերն ուղղել միայն տվյալ բնակարանում բնակվող որևէ չափահաս անդամին, գերադասելի է` տան տիկնոջը: Չմոռանալ լրացնել շենքի հասցեն: Հասցեն և բնակարանի թիվն ուղենիշ են հանդիսանալու հետագայում ճշտումներ անելու (եթե կարիք առաջանա), ինչպես նաև տվյալ ընտանիքի էներգախնայողությունը հաշվարկելու համար (շենքի ջերմամեկուսացումն իրականացնելուց հետո):

## Ներդիր 3. Վերլուծական աղյուսակներ

**ԱՂՅՈՒՍԱԿ** 1. **Հարցմանը մասնակցած տնային տնտեսությունների (ՏՏ) և բնակչության բաշխումն ըստ մարզերի և համայնքների**

**<u>Ըստ մարզերի</u>**

| NN | Մարզեր | Հարցմանը մասնակցած ՏՏ-ների թիվը | Հարցմանը մասնակցած ՏՏ-ների անդամների թիվը, *մարդ* | Մասնաբաժինը, *%* | |
|---|---|---|---|---|---|
| | | | | *ըստ ՏՏ-ների* | *ըստ բնակչությա ն* |
| 1. | Սյունիք | 956 | 3327 | 55.0 | 57.4 |
| 2. | Լոռի | 684 | 2098 | 39.3 | 36.2 |
| 3. | Արագածոտն | 41 | 138 | 2.4 | 2.4 |
| 4. | Տավուշ | 33 | 121 | 1.9 | 2.1 |
| 5. | Արարատ | 24 | 113 | 1.4 | 1.9 |
| | **Ընդամենը** | ***1738*** | ***5797*** | ***100.0*** | ***100.0*** |

**<u>Ըստ համայնքների</u>**

| NN | Համայնքն եր | Հարցմանը մասնակցած ՏՏ-ների թիվը | Հարցմանը մասնակցած ՏՏ-ների անդամների թիվը, *մարդ* | Մասնաբաժինը, *%* | |
|---|---|---|---|---|---|
| | | | | *ըստ ՏՏ-ների* | *ըստ բնակչության* |
| **Սյունիքի մարզ** | | | | | |
| 1. | Քաջարան | 956 | 3327 | 55.0 | 57.4 |
| **Լոռու մարզ** | | | | | |
| 2. | Վանաձոր | 265 | 809 | 15.2 | 14.0 |
| 3. | Տաշիր | 188 | 522 | 10.8 | 9.0 |
| 4. | Ախթալա | 154 | 510 | 8.8 | 8.8 |
| 5. | Սպիտակ | 48 | 154 | 2.8 | 2.6 |
| 6. | Ստեփանավա ն | 29 | 103 | 1.7 | 1.8 |
| **Արագածոտնի մարզ** | | | | | |
| 7. | Աշտարակ | 41 | 138 | 2.4 | 2.4 |
| **Տավուշի մարզ** | | | | | |
| 8. | Իջևան | 33 | 121 | 1.9 | 1.9 |
| **Արարատի մարզ** | | | | | |
| 9. | Վեդի | 24 | 113 | 1.4 | 1.4 |
| | ***Total*** | ***1738*** | ***5797*** | ***100.0*** | ***100.0*** |

**ԱՂՅՈՒՍԱԿ** 2. **Հարցված տնային տնտեսությունների անդամների սեռատարիքային կազմը՝ ըստ մարզերի և համայնքների**

**Ըստ մարզերի**

| Մարզեր | ՏՏ անդամների թիվը, մարդ | Որից՝ | | | Տեսակարար կշիռը, % | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Կանայք (աղջիկներ) | <18 տարեկան երեխաներ | Թոշակա-ռուներ > 63 | Կանայք (աղջիկներ) | <18 տարեկան երեխաներ | Թոշակա-ռուներ > 63 |
| Սյունիք | 3327 | 1674 | 744 | 447 | 50.3 | 22.4 | 7.7 |
| Լոռի | 2098 | 1151 | 498 | 370 | 54.9 | 23.7 | 17.6 |
| Արագածոտն | 138 | 71 | 28 | 18 | 51.4 | 20.3 | 13.0 |
| Տավուշ | 121 | 60 | 27 | 12 | 49.6 | 22.3 | 9.9 |
| Արարատ | 113 | 51 | 34 | 17 | 45.1 | 30.1 | 15.0 |
| **Ընդամենը** | ***5797*** | ***3007*** | ***1331*** | ***864*** | ***51.9*** | ***23.0*** | ***14.9*** |

**Ըստ համայնքների**

**ԱՂՅՈՒՍԱԿ 3. Հարցված տնային տնտեսությունների սոցիալական**

| Մարզեր | ՏՏ-ների թիվը | Որից` այն ՏՏ-ների թիվը. | | | Տեսակարար կշիռը, % | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Որոնք ստանում են ընտանե-կան նպաստ | Որոնք ունեն հաշմանդա-մություն ունեցող անդամ | Միայնակ թոշակա-ռուներ | Որոնք ստանում են ընտանե-կան նպաստ | Որոնք ունեն հաշմանդա-մություն ունեցող անդամ | Միայնակ թոշակա-ռուներ |
| Սյունիք | 956 | 24 | 68 | 55 | 2.5 | 7.1 | 5.8 |
| Լոռի | 684 | 113 | 110 | 68 | 16.5 | 16.1 | 9.9 |
| Արագածոտն | 41 | 2 | 4 | 1 | 4.9 | 9.8 | 2.4 |
| Տավուշ | 33 | 2 | 7 | 0 | 6.1 | 17.1 | - |
| Արարատ | 24 | 2 | 12 | 3 | 8.3 | 50.0 | 12.5 |
| ***Ընդամենը*** | *1738* | *143* | *201* | *127* | *8.2* | *11.6* | *7.3* |

**խոցելիության ցուցանիշներն ըստ մարզերի և համայնքների**

| Համայնքներ | ՏՏ անդամ-ների թիվը, *մարդ* | Որից` | | | Տեսակարար կշիռը, % | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Կանայք (աղջիկներ) | <18 տարեկան երեխաներ | Թոշակա-ռուներ, > 63 | Կանայք (աղջիկներ) | <18 տարեկան երեխաներ | Թոշակա-ռուներ > 63 |
| Քաջարան | 3327 | 1674 | 744 | 447 | 50.3 | 22.4 | 7.7 |
| Վանաձոր | 809 | 427 | 178 | 166 | 52.8 | 22.0 | 20.5 |
| Տաշիր | 522 | 302 | 126 | 102 | 57.9 | 24.1 | 19.5 |
| Ախթալա | 510 | 280 | 131 | 58 | 54.9 | 25.7 | 11.3 |
| Սպիտակ | 154 | 86 | 41 | 16 | 55.8 | 26.6 | 10.4 |
| Ստեփանավան | 103 | 56 | 22 | 28 | 54.4 | 21.4 | 13.0 |
| Աշտարակ | 138 | 71 | 28 | 18 | 51.4 | 20.3 | 13.0 |
| Իջևան | 121 | 60 | 27 | 12 | 49.6 | 22.3 | 9.9 |
| Վեդի | 113 | 51 | 34 | 17 | 45.1 | 30.1 | 15.0 |
| **Ընդամենը** | *5797* | *3007* | *1331* | *864* | *51.9* | *23.0* | *14.9* |

**Ըստ մարզերի**

**Ըստ համայնքների**

| Համայնքներ | ՏՏ-ների թիվը | Որոնցից՝ այն ՏՏ-ների թիվը. | | | Տեսակարար կշիռը, % | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Որոնք ստանում են ընտանե-կան նպաստ | Որոնք ունեն հաշմանդա-մություն ունեցող անդամ | Միայնակ թոշակա-ռուներ | Որոնք ստանում են ընտանե-կան նպաստ | Որոնք ունեն հաշմանդա-մություն ունեցող անդամ | Միայնակ թոշակա-ռուներ |
| Քաջարան | 956 | 24 | 68 | 55 | 2.5 | 7.1 | 5.8 |
| Վանաձոր | 265 | 24 | 28 | 25 | 9.1 | 10.6 | 9.4 |
| Տաշիր | 188 | 47 | 28 | 24 | 25.0 | 14.9 | 12.8 |
| Ախթալա | 154 | 19 | 29 | 12 | 12.3 | 18.8 | 7.9 |
| Սպիտակ | 48 | 15 | 17 | 4 | 31.2 | 35.4 | 8.3 |
| Ստեփանավան | 29 | 8 | 8 | 3 | 27.6 | 27.6 | 10.3 |
| Աշտարակ | 41 | 2 | 4 | 1 | 4.9 | 9.8 | 2.4 |
| Իջևան | 33 | 2 | 7 | 0 | 6.1 | 17.1 | - |
| Վեդի | 24 | 2 | 12 | 3 | 8.3 | 50.0 | 12.5 |
| ***Ընդամենը*** | *1738* | *143* | *201* | *127* | *8.2* | *11.6* | *7.3* |

**ԱՂՅՈՒՍԱԿ** 4. **Հարցմանը մասնակցած կանանց և տղամարդկանց գլխավորությամբ տնային տնտեսությունների գենդերային ցուցանիշներն ըստ համայնքների**

| Համայնքներ | Կանանց գլխավորությամբ և տղամարդկանց գլխավորությամբ ՏՏ-ներ | | | ԿՏՏ-ներում կանանց մասնաբաժինը | | | ՏՏՏ-ներում կանանց մասնաբաժինը | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Կանանց գլխավո-րությամբ ՏՏ-ներ (ԿՏՏ) | Տղամարդ-կանց գլխավո-րությամբ ՏՏ-ներ (ՏՏՏ) | ԿՏՏ մասնա-բաժինը % | ԿՏՏ անդամ-ները, *մարդ* | Որից՝ | | ՏՏՏ անդամ-ները, *մարդ* | Որից՝ | |
| | | | | | Կանայք (աղջիկ-ներ) | Մասնա-բաժինը, % | | Կանայք (աղջիկ-ներ) | Մասնա-բաժինը, % |
| Քաջարան | 171 | 785 | **17.9** | 345 | 258 | **74.8** | 2982 | 1416 | **47.5** |
| Վանաձոր | 134 | 131 | **50.6** | 383 | 241 | **62.9** | 426 | 186 | **43.7** |
| Տաշիր | 78 | 110 | **41.5** | 141 | 112 | **79.4** | 381 | 190 | **49.9** |
| Ախթալա | 53 | 101 | **34.4** | 122 | 83 | **68.0** | 388 | 197 | **50.8** |
| Սպիտակ | 25 | 23 | **52.1** | 73 | 48 | **65.8** | 81 | 38 | **46.9** |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ստեփանավան | 10 | 19 | **34.5** | 25 | 18 | **72.0** | 78 | 38 | **48.7** |
| Աշտարակ | 20 | 21 | **48.8** | 62 | 38 | **61.3** | 76 | 33 | **43.4** |
| Իջևան | 7 | 26 | **21.2** | 20 | 12 | **60.0** | 101 | 48 | **47.5** |
| Վեդի | 6 | 18 | **25.0** | 27 | 12 | **44.4** | 86 | 39 | **45.3** |
| ***Ընդամենը*** | *504* | *1234* | *29.0* | *1198* | *822* | *68.5* | *4599* | *2185* | *47.5* |

**ԱՂՅՈՒՍԱԿ** 5. **Հարցմանը մասնակցած ԿՏՏ-ների և ՏՏՏ-ների սոցիալական խոցելիության ցուցանիշներն ըստ համայնքների**

| **Համայնքներ** | **Կանանց գլխավորությամբ ՏՏ-ներ (ԿՏՏ)** | | | **Տղամարդկանց գլխավորությամբ ՏՏ-ներ (ՏՏՏ)** | | | **ԿՏՏ-ների մասնաբաժինը, %** | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **Որոնք ստանում են ընտանե-կան նպաստ** | **Որոնք ունեն հաշման-դամու-թյուն ունեցող անդամ** | **Միայ-նակ թոշա-կա-ռուներ** | **Որոնք ստանում են ընտանե-կան նպաստ** | **Որոնք ունեն հաշման-դամու-թյուն ունեցող անդամ** | **Միայ-նակ թոշա-կա-ռուներ** | **Ընտանե-կան նպաստ ստացող ՏՏ-ներում** | **Հաշման-դամու-թյուն ունեցող անդամ ունեցող ՏՏ-ներում** | **Միայ-նակ թոշա-կառու-ների ՏՏ-ներում** |
| Քաջարան | 13 | 9 | 41 | 11 | 59 | 14 | 54.2 | 13.2 | 74.5 |
| Վանաձոր | 12 | 16 | 19 | 12 | 12 | 6 | 50.0 | 57.1 | 76.0 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Տաշիր | 23 | 13 | 21 | 24 | 15 | 3 | 48.9 | 46.4 | 87.5 |
| Ախթալա | 15 | 5 | 10 | 4 | 24 | 2 | 78.9 | 17.2 | 83.3 |
| Սպիտակ | 8 | 6 | 3 | 7 | 11 | 1 | 53.3 | 35.3 | 75.0 |
| Ստեփանավան | 3 | 2 | 2 | 5 | 6 | 1 | 37.5 | 25.0 | 66.7 |
| Աշտարակ | 2 | 0 | 0 | 0 | 4 | 1 | 100.0 | - | - |
| Իջևան | 0 | 0 | 0 | 2 | 7 | 0 | - | - | - |
| Վեդի | 0 | 2 | 1 | 2 | 10 | 2 | - | 16.7 | 33.3 |
| ***Ընդամենը*** | ***76*** | ***53*** | ***97*** | ***67*** | ***148*** | ***30*** | ***53.1*** | ***26.4*** | ***76.4*** |

**ԱՂՅՈՒՍԱԿ** 6. **Հետազոտված տնային տնտեսությունների «Ջեռուցման աղքատության» հիմնական ցուցանիշներն ըստ համայնքների**

*ՏՏ-ները պատասխանել են հարցաթերթի հարցերին՝ վերհիշելով նախորդ տարվա ջեռուցման սեզոնը*

| **Համայնքներ** | **ՏՏ-ների թիվը** | **ՏՏ-ներ, որոնք առհասարակ չեն ջեռուցել իրենց բնակարանը** | | **ՏՏ-ներ, որոնք փայտ են օգտագործել ջեռուցման համար** | | **ՏՏ-ների ընդհանուր թիվը, որոնք չեն ջեռուցել կամ փայտ են օգտագործել ջեռուցման համար** | | **ՏՏ-ներ, որոնք ջեռուցման համար օգտագործել են «ինքնաշեն» վառարաններ և տաքացուցիչներ** | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | **Քանակ** | **%** | **Քանակ** | **%** | **Քանակ** | **%** | **Քանակ** | **%** |
| Քաջարան | 956 | 6 | 0.6 | 35 | 3.7 | 41 | 4.3 | 43 | 4.5 |
| Վանաձոր | 265 | 13 | 4.9 | 3 | 1.2 | 16 | 6.1 | 43 | 16.2 |
| Տաշիր | 188 | 8 | 4.2 | 2 | 1.1 | 10 | 5.3 | 116 | 61.7 |
| Ախթալա | 154 | 2 | 1.3 | 88 | 57.1 | 90 | 58.4 | 98 | 63.6 |
| Սպիտակ | 48 | 0 | - | 2 | 4.2 | 2 | 4.2 | 4 | 8.3 |
| Ստեփանավան | 29 | 1 | 3.5 | 3 | 10.3 | 4 | 13.8 | 11 | 37.9 |
| Աշտարակ | 41 | 0 | - | 0 | - | 0 | - | 0 | - |
| Իջևան | 33 | 0 | - | 2 | 6.1 | 2 | 6.1 | 16 | 48.5 |
| Վեդի | 24 | 0 | - | 0 | - | 0 | - | 0 | - |
| ***Ընդամենը*** | ***1738*** | ***30*** | ***1.7*** | ***135*** | ***7.8*** | ***165*** | ***9.5*** | ***331*** | ***19.0*** |

## ԱՂՅՈՒՍԱԿ 7. Բնակարանը ջեռուցող ՏՏ-ների բաշխումն ըստ ջեռուցման համար օգտագործվող վառելիքի և ըստ համայնքների

*ՏՏ-ները պատասխանել են հարցաթերթի հարցերին՝ վերհիշելով նախորդ տարվա ջեռուցման սեզոնը*

| Համայնքներ | ՏՏ-ներ, որոնք ջեռուցում են բնակարանը | | ՏՏ-ներ, որոնք ջեռուցման համար օգտագործում են՝ | | | ՏՏ մասնաբաժինն ըստ ջեռուցման վառելիքի, % | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Քանակ | % | Գազ* | Էլեկտրա-էներգիա | Փայտ** | Գազ* | Էլեկտրա-էներգիա | Փայտ** |
| Քաջարան | 950 | 99.4 | 684 | 231 | 35 | 72.0 | 24.3 | 3.7 |
| Վանաձոր | 252 | 95.1 | 146 | 103 | 3 | 57.9 | 40.9 | 1.2 |
| Տաշիր | 180 | 95.7 | 155 | 23 | 2 | 86.1 | 12.8 | 1.1 |
| Ախթալա | 152 | 98.7 | 49 | 15 | 88 | 32.2 | 9.9 | 57.9 |
| Սպիտակ | 48 | 100.0 | 40 | 6 | 2 | 83.3 | 12.5 | 4.2 |
| Ստեփանավան | 28 | 96.6 | 19 | 6 | 3 | 67.9 | 21.4 | 10.7 |
| Աշտարակ | 41 | 100.0 | 38 | 3 | 0 | 92.7 | 7.3 | - |
| Իջևան | 33 | 100.0 | 24 | 7 | 2 | 72.7 | 21.2 | 6.1 |
| Վեդի | 24 | 100.0 | 21 | 3 | 0 | 87.5 | 12.5 | - |
| ***Ընդամենը*** | ***1708*** | ***98.3*** | ***1176*** | ***397*** | ***135*** | ***68.9*** | ***23.2*** | ***7.9*** |

*** -** *ներառյալ այն ՏՏ-ները, որոնք օգտագործում են նաև էլեկտրական տաքացուցիչներ (ընդհանուր առմամբ՝ 11 ՏՏ);*

***** -** *ներառյալ այն ՏՏ-ները, որոնք օգտագործում են նաև գազօջախ կամ էլեկտրական տաքացուցիչ (ընդհանուր առմամբ՝ 3 ՏՏ):*

## ԱՂՅՈՒՍԱԿ 8. Հարցված տնային տնտեսությունների գենդերային և սոցիալական խոցելիության ցուցիչներն ըստ ջեռուցման համար օգտագործվող վառելիքի

| Սոցիալապես խոցելի ՏՏ-ներ | ԿՏՏ-ներ, որոնք գեռուցում են բնակա-րանը | ԿՏՏ-ներ, որոնք բնակա-րանը գեռուցելու համար օգտագործում են՝ | | | ՏՏՏ-ներ, որոնք գեռուցում են բնակա-րանը | ՏՏՏ-ներ, որոնք բնակա-րանը գեռուցելու համար օգտագործում են՝ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Գազ | Էլեկտրա-էներգիա | Փայտ | | Գազ | Էլեկտրա-էներգիա | Փայտ |
| **Ընդամենը** | 490 | 281 | 168 | 41 | 1218 | 895 | 229 | 94 |
| *%* | 100.0 | 57.3 | 34.3 | 8.4 | 100.0 | 73.5 | 18.8 | 7.7 |
| *of which:* | | | | | | | | |
| Ստանում են ընտանեկան նպաստ | 75 | 39 | 25 | 11 | 66 | 47 | 11 | 8 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ունեն հաշմանդա-մությ ուն ունեցող անդամ | 52 | 32 | 16 | 4 | 146 | 99 | 25 | 22 |
| Միայնակ թոշա-կառու | 92 | 42 | 44 | 6 | 26 | 9 | 14 | 3 |
| ***Յուրաքանչյուր խոցելի խմբի տնային տնտեսությունների բաշխումն ըստ օգտագործվող վառելիքի, %*** | | | | | | | | |
| Ստանում են ընտանեկան նպաստ | 100.0 | 52.0 | 33.3 | 14.7 | 100.0 | 71.2 | 16.7 | 12.1 |
| Ունեն հաշմանդա-մությ ուն ունեցող անդամ | 100.0 | 61.5 | 30.8 | 7.7 | 100.0 | 67.8 | 17.2 | 15.0 |
| Միայնակ թոշա-կառու | 100.0 | 45.7 | 47.8 | 6.5 | 100.0 | 34.6 | 53.9 | 11.5 |

**ԱՂՅՈՒՍԱԿ 9. Սոցիալապես խոցելի ԿՏՏ- ների և ՏՏՏ- ների «ջեռուցման աղքատությունը»**

| **«Ջեռուցման աղքատության» ցուցանիշներ** | **ԿՏՏ** | **Որից`** | | | **ՏՏՏ** | **Որից`** | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | **Ստանում են ընտանե-կան նպաստ** | **Ունեն հաշմանդամություն ունեցող անդամ(ներ)** | **Միայնակ թոշակա-ռուներ** | | **Ստանում են ընտանե-կան նպաստ** | **Ունեն հաշմանդամություն ունեցող անդամ(ներ)** | **Միայնակ թոշակա-ռուներ** |
| ՏՏ թիվը յուրաքանչյուր խմբում | 504 | 76 | 53 | 96 | 1234 | 67 | 148 | 31 |
| Որից` | | | | | | | | |
| ՏՏ-ներ, որոնք չեն ջեռուցում բնակարանը | 14 | 1 | 1 | 4 | 16 | 1 | 2 | 5 |
| ***% (տվյալ խմբում)*** | ***2.8*** | ***1.3*** | ***1.9*** | ***4.2*** | ***1.3*** | ***1.5*** | ***1.4*** | ***16.1*** |
| ՏՏ-ներ, որոնք օգտագործում են փայտ | 41 | 11 | 4 | 6 | 94 | 8 | 22 | 3 |
| ***% (տվյալ խմբում)*** | ***8.1*** | ***14.5*** | ***7.5*** | ***4.2*** | ***7.6*** | ***11.9*** | ***14.9*** | ***9.7*** |
| **Ընդամենը ՏՏ-ներ, որոնք ջեռուցման** | 55 | 12 | 5 | 10 | 110 | 9 | 24 | 8 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **տեսակետից աղքատ են** | | | | | | | |
| *% (տվյալ խմբում)* | ***10.9*** | ***15.8*** | ***9.4*** | ***10.4*** | ***8.9*** | ***13.4*** | ***16.2*** | ***25.8*** |

**ԱՂՅՈՒՍԱԿ 10. Բնակարանը ջեռուցող ՏՏ-ների բաշխումն ըստ *ջեռուցման սարքերի* և համայնքների**

| **Համայնքներ** | **ՏՏ-ներ, որոնք ջեռուցում են բնակարանը** | **Այդ թվում ջեռուցում են՝** | | | **ՏՏ-ների մասնաբաժինը, %** | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | BAXI* | TURBO** | **Վառարան*** ** | BAXI* | TURBO** | **Վառարան*** ** |
| Քաջարան | 950 | 654 | 31 | 265 | 68.8 | 3.3 | 27.9 |
| Վանաձոր | 252 | 110 | 10 | 132 | 43.6 | 4.0 | 52.4 |
| Տաշիր | 180 | 48 | 1 | 131 | 26.7 | 0.5 | 72.8 |
| Ախթալա | 152 | 17 | 23 | 112 | 11.2 | 15.1 | 73.7 |
| Սպիտակ | 48 | 15 | 23 | 10 | 31.3 | 47.9 | 20.8 |
| Ստեփանավան | 28 | 11 | 0 | 17 | 39.3 | - | 60.7 |
| Աշտարակ | 41 | 13 | 25 | 3 | 31.7 | 61.0 | 6.3 |
| Իջևան | 33 | 9 | 8 | 16 | 27.3 | 24.2 | 48.5 |
| Վեդի | 24 | 9 | 12 | 3 | 37.5 | 50.0 | 12.5 |
| ***Ընդամենը*** | ***1708*** | ***886*** | ***133*** | ***689*** | ***51.9*** | ***7.8*** | ***40.3*** |

** - ներառյալ բոլոր տիպի պատին ամրացված լոկալ ջեռուցման կաթսաները*
*** - ներառյալ բոլոր տեսակի փակ այրման խցիկով գազի վառարանները*
**** - ներարռում է բոլոր այլ տիպի վառարանները (այդ թվում՝ «ինքնաշեն») անկախ կիրառվող վառելիքից, ինչպես նաև ջեռուցման համար օգտագործված այլ միջոցները (գազօջախ, էլեկտրական տաքացուցիչ և այլն)*

**ԱՂՅՈՒՍԱԿ 11. Բնակարանը ջեռուցող ԿՏՏ-ների և ՏՏՏ-ների բաշխումն *ըստ ջեռուցման միջոցների և ըստ սոցիալապես խոցելի ՏՏ-ների***

| **Սոցիալապես խոցելի ՏՏ-ներ** | **ԿՏՏ-ներ, որոնք գեռուցում են բնակա-րանը** | **ԿՏՏ-ներ, որոնք բնակարանը գեռուցում են՝** | | | **ՏՏՏ-ներ, որոնք գեռուցում են բնակա-րանը** | **ՏՏՏ-ներ, որոնք բնակարանը գեռուցում են՝** | | | **Գենդերային անհավասարության գործակիցը*** | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | BAXI | TURBO | **Վառարան** | | BAXI | TURBO | **Վառարան** | BAXI | TURBO | **Վառարան** |
| **Ընդամենը ՏՏ տվյալ խմբում** | 490 | 171 | 51 | 268 | 1218 | 715 | 82 | 421 | **0.59** | **1.55** | **1.58** |
| *%* | ***100.0*** | ***34.9*** | ***10.4*** | ***54.7*** | ***100.0*** | ***58.7*** | ***6.7*** | ***34.6*** | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Որից՝ | | | | | | | | | | | |
| Ստանում են ընտանեկան նպաստ | 75 | 16 | 10 | 49 | 66 | 15 | 8 | 43 | **0.94** | **1.10** | **1.00** |
| *%* | ***100.0*** | ***21.3*** | ***13.3*** | ***65.4*** | ***100.0*** | ***22.7*** | ***12.1*** | ***65.2*** | | | |
| Ունեն հաշմանդա-մու թյուն ունեցող անդամ | 52 | 18 | 2 | 32 | 146 | 59 | 25 | 62 | **0.86** | **0.22** | **1.45** |
| *%* | ***100.0*** | ***34.6*** | ***3.8*** | ***61.6*** | ***100.0*** | ***40.4*** | ***17.1*** | ***42.5*** | | | |
| Միայնակ թոշակառու | 92 | 21 | 6 | 65 | 26 | 5 | 2 | 19 | **1.19** | **0.84** | **0.97** |
| *%* | ***100.0*** | ***22.8*** | ***6.5*** | ***70.7*** | ***100.0*** | ***19.2*** | ***7.7*** | ***73.1*** | | | |
| ***** - *հաշվարկվում է որպես յուրաքանչյուր խմբում ԿՏՏ- ների և ՏՏՏ- ների մասնաբաժնի հարաբերակցություն:* | | | | | | | | | | | |

## ԱՂՅՈՒՍԱԿ 12. **Բնակարանը ջեռուցող ԿՏՏ-ների և ՏՏՏ-ների բաշխումն** ***ըստ ջեռուցման ռեժիմի* և ըստ սոցիալապես խոցելի ՏՏ-ների***

| **Սոցիալապես խոցելի ՏՏ-ներ** | **ԿՏՏ-ներ, որոնք գեռուցում են բնակա-ր անը** | **ԿՏՏ-ներ, որոնք բնակարանը գեռուցում են՝** | | | **ՏՏՏ-ներ, որոնք գեռուցում են բնակա-ր անը** | **ՏՏՏ-ներ, որոնք բնակարանը գեռուցում են՝** | | | **Գենդերային անհավասարությ ան գործակիցը** | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | **100%** | **50%** | **30%** | | **100%** | **50%** | **30%** | **100%** | **50%** | **30%** |
| **Ընդամենը ՏՏ տվյալ խմբում** | 490 | 98 | 263 | 129 | 1218 | 357 | 646 | 215 | **0.68** | **1.01** | **1.49** |
| *%* | ***100.0*** | ***20.0*** | ***53.7*** | ***26.3*** | ***100.0*** | ***29.3*** | ***53.0*** | ***17.7*** | | | |
| Որից՝ | | | | | | | | | | | |
| Ստանում են ընտանեկան նպաստ | 75 | 19 | 34 | 22 | 66 | 34 | 25 | 7 | **0.49** | **1.20** | **2.76** |
| *%* | ***100.0*** | ***25.3*** | ***45.3*** | ***29.3*** | ***100.0*** | ***51.5*** | ***37.9*** | ***10.6*** | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ունեն հաշմանդա-մու թյուն ունեցող անդամ | 52 | 15 | 23 | 14 | 146 | 47 | 78 | 21 | **0.89** | **0.83** | **1.88** |
| *%* | ***100.0*** | ***28.8*** | ***44.2*** | ***27.0*** | ***100.0*** | ***32.2*** | ***53.4*** | ***14.4*** | | | |
| Միայնակ թոշակառու | 92 | 13 | 39 | 40 | 26 | 4 | 6 | 16 | **0.92** | **1.84** | **0.71** |
| *%* | ***100.0*** | ***14.1*** | ***42.4*** | ***43.5*** | ***100.0*** | ***15.4*** | ***23.1*** | ***61.5*** | | | |

**** - Ջեռուցման ռեժիմը*** *գնահատվել է բնակիչների կողմից երկու հարցերի պատասխանների ընդհանրացված ընկալման հիման վրա, այն է.*
*ա) արդյո՞ք տաքացնում եք ամբողջ բնակարանը, թե որոշակի սենյակներ:*
*բ) արդյո՞ք ջեռուցում եք ամբողջ օրը թե որոշակի ժամերին:*
*Կախված ջեռուցվող սենյակների քանակից և ջեռուցման ժամերից՝ հարցազրուցավարի օգնությամբ բնակիչը ջեռուցման ռեժիմը գնահատել է հետևյալ տոկոսներով ՝ 100, 50 և 30:*